



# ԻՈՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ  
ԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ  
ՀԱՅՈՉ  
ՆՐՈՒՍԱՂԷՄԻ

Ծ ՏԼԻԻ  
Դ

1976





ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԿԷՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

|      |       |       |
|------|-------|-------|
| 1976 | Ապրիլ | Թիւ 4 |
| 1976 | April | No. 4 |

# SION


VOL. 50


**A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY**  
**OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM**

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press  
Jerusalem





Հ Ա Յ Ս Փ Ի Ի Ռ Ք Ը

ԵՒ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Բ

ՀԱՅ ՍՓԻՒԻՔԸ մեր պատմութեան ամրողջ տարածքին՝ երրորդ, չորրորդ դարերէն սկսեալ, արգասիքն է եղած մեր քաղաքական դժբախտ ճակատագրին: Սփիւռք բացատրութիւնը, հետեւաբար, այս օրերուն իր մէջ կը խտացնէ մեր վերջին եղեռնը, որուն պատճառաւ Հայ ժողովուրդի մեծ մասը իր պատմական հոգեբէն բռնի տեղահանուեցաւ, նետուելով հարկադրաբար օտար երկիրներու պանդխտութեան և գութին: Երբ Հայ Սփիւռք կ'ըսենք, չենք հասկնար իր երկրէն կամովին հեռացած բազմութիւններ, օտար երկիրներու մէջ տնտեսական նոր պայմաններ որոնելու նպատակներով, ինչպէս է պարագան բազմահազար Խտայացիներու, Գերմաններու, Յոյներու, Լիբանանցիներու և ուրիշներու, որոնք բախտ փնտռելու դացած են և կ'երթան Հիւսիսային և Հարաւային Ամերիկաներ, Աւստրալիա, Գանատա և Ափրիկեան երկիրներ: Անոնք ունին իրենց սեփական հայրենիքը և կրնան հոն վերադառնալ իրենց ուղած ատեն, իսկ մե՞նք. ահա՛ մեր ողբերգութիւնը:

Հայ Սփիւռքը արդիւնք է հետեւաբար քաղաքական դէպքերու պատճառաւ մեր ժողովուրդի իր երկրէն բռնի վտարուելու դժբախտութեան, պարզելով եթէ ոչ նոր, սակայն գերազանց երեւոյթ մը Հայոց պատմութեան մէջ: Ժամանակաւոր երևոյթ մը չէ

ան, մեր կամեցողութեան հետ կապուած, այլ մեզի պարտադրուած մեր թշնամիի կողմէն, որուն հետեանքով մեր դարաւոր հայրենիքը պարպուեցաւ իր զաւակներէն, մեր բիւրաւոր նահատակներու մարմինները մնացին անթաղ՝ ամայի անապատներու մէջ. իսկ անոնք որ հազարումէ կ'մահերէ վերջ կ'ընէին ողջ մնալ, անդատական նետուեցան օտար մշտնեւրո ծոցը, շարունակելու համար իրենց քաւարանեան կեանքը: Մեր երազներու բոցավառ իւրոյկէն, փառք նախախնամութեան, կ'ընայ տակաւին յուսատու ճառագայթ մը Արագածի ստորոտին՝ որուն կարելի չողերր կ'ըլլէր գերագոյն ապահովութիւնը մեր երէկի երազներուն և վաղուան մեծ յոյսին:

Եթէ կէս դար առաջ մեր դահիճը ի վիճակի չէր հակալուելու իր տափաստանային մղումները, ո՞ր էին քաղաքակիրթ կոչուած ժողովուրդները, որոնք յետոյ պիտի պատուէին բարոյական յղացքները իրենց խղճմանքին, մարդակերութեան այս արարքը վերածելու ինքնապաշտպանութեան տարադի, վարձատրելով ոճրագործը իր քստմնելի արարքին համար:

Իրաւունք ունէր Երկոսյա մեծ գործիչը, երբ կը յայտարարէր. «Հաւատա՛ Հայ ժողովուրդ, եթէ օր մը մարդկութիւնը սթափի իր այժմու բարոյական թմբիբէն, գութ չէ որ պիտի ունենայ քու հանդէսը՝ այլ հիացում»: Մեր ժողովուրդը դարերով ոչ դուրս ելած է, ոչ ալ հիացում ակնկալած է, հակառակ իր վրայ խուժող զօրախումբիւններուն, այլ Աստուծոյ արդար արեւին տակ խաղաղ և ազատ ապրելու իրաւունքը:

Մենք կ'ըսենք, որ Թրքահայաստանը, որովհետեւ փոքրամասնութիւն էինք: Փոքրամասնութիւն մը սակայն՝ Թրքական ամբողջ կայսրութեան մէջ, ոչ թէ իր պապեանական երկրին մէջ, դարերով բնակուած Հայ ժողովուրդով և ապա բռնազրաւուած թուրքերու կողմէն: Փոքրամասնութիւններու իրաւունքները Եւրոպայի նման քաղաքակիրթ նկատուած երկրներու մէջն իսկ՝ քիչ անգամ յարգուած են, ուր մնաց Թուրքիոյ պէս երկրի մը համար: Անշուշտ թէ փոքրամասնութիւնները, իրարու կապուած լիցումով, կրօնքով և ցեղով, միշտ տարբեր դեպքած են ինքզինքնին իրենց վրայ տիրող մեծամասնութեան, երբ մանաւանդ չեն վայելած քաղաքական, անտեսական և ընկերային հաւասար իրաւունքներ: Դժգոհութիւններ, նոյնիսկ յեղափոխութիւն, պատճառներ չեն, այլ արդիւնք, մարդկային տեսակ մը գիտակից բողոք, պարտադրուած անշնչելի կացութեան հանդէպ:

Փոքրամասնութիւններու գոյութեան իրաւունքը ու շարունակութեան առարկայ եղաւ գլխաւորաբար ԺԸ. դարուն, ռամկապետական կարգերու հաստատումէն յետոյ: Արդի մարդկայնական վերաբերումը պետութիւններու կողմէն փոքրամասնութեանց նրկատմամբ, միջադեպին օրէնքներով կը փորձէ նուազեցնել սրուած թիւները՝ որոնք գոյութիւն ունին մեծամասնութիւններու և փոքրամասնութիւններու միջև: 1919ին անգամ մը ևս նուիրագործուած միջազգային օրէնքներով պիտի պաշտպանուէին փոքրա-

մասնութիւններու կրօնական, ցեղային և լեզուական իրաւունքները: Սակայն Աղղերու Լիկայով երաշխաւորուած այս իրաւունքները միշտ ալ մնացին մեռեալ տառ, անորոշ, անարդիւնք և անգործադրելի, հակառակ միջազգային օրէնք մը ըլլալու իրենց նկարագրին ու սահմանումին: Ի վերջոյ պէտք չէ մոռնալ թէ անգիր կամ գրաւոր բոլոր ձեւի օրէնքներն ու հրամանագրերը թուղթ են և թուղթի վրայ կը մնան, եթէ անոնց ետեւ չկայ ուժը, որ յարգել կարենայ տալ գրուած պայմանագրութիւնները: Մարդկային յառաջդիմութիւնն ու դատաւարականութիւնը դեռ հասած չեն այն աստիճանին, որ օրէնքը յարգուի միայն իր պարունակած գաղափարի գեղեցկութեան և արդարութեանը համար: Որքան ճիշդ է Ֆրանսացի մեծ մտածող Փասքային խօսքը. «Չկրնալով պարտադրել արդարութիւնը, արդարացուցիչն ուժին տիրապետութիւնը, և արդարութիւնը ուժաւորելու անկարող, արդարացուցիչն ուժը»:

Ճիշդ է թէ փոքրամասնութիւններու իրաւունքներու հարցը, 1919ի խաղաղութեան ժողովին, բացառիկ ուշադրութեան առարկայ եղաւ, սակայն անոնց գործադրութիւնը յանձնուեցաւ փոքրամասնութիւններու բնակած երկիրներու իշխանութեանց, որոնք պիտի գործադրէին զանոնք համաձայն իրենց երկրի կրօնական, ցեղային բարեխառնութեան և թոյլտուութեան, բայց ոչ միջազգային պաշտպանութեան: Իսկ երկրի մը ներքին օրէնքները, ժամանակի և պարագաներու բերումով կրնան միշտ փոփոխութեան ենթակայ ըլլալ, յաճախ ըստ կամս, ստէպ նոր յեղաշրջումներու պարտադրանքով:

Յետոյ, եթէ մօտէն դիտենք այժմու պետութիւններու ձեւն ու տարազը, իրաւունք պիտի տանք մեզի եզրակացնելու թէ նոր չէ որ կասած է պետութեան ըմբռնումին յառաջդիմութիւնը: Երբեմն փորձեր կ'ըլլան շողջողուն բառերով զարդարելու և փայլեցնելու անոնց բնոյթն ու կառույցը, որոնք ծանօթ են մեզի Դեմոկրատ, Ֆաշիստ, Պրոգրեսիստ, Համայնավար և նման անուններով: Ինչ անուն ալ որ տրուի պետական այս դրութիւններուն, անոնց առաջնորդները որոնք քաղաքականութիւն կը խաղան և պետութիւն կը վարեն, չեն կրնար ծածկել իրենց անբաւարարութեանց ցաւը: Արդի պետութիւնը ոչինչով յառաջդիմած է: Այժմ ինչ որ պետութիւն կը կոչուի, օլիգարքի մըն է, ամբոխային կամ դիւնական ուժին կոթնած անհատներու ձեռնարկ, ընկերաբանական վարդապետութեան մը աւետարանէն գողցուած քանի մը տարազներու պատկերազարդումով: Յաճախ մարդ կը տարուի մտածելու թէ Հռոմէական հին պետութիւնը, այն որ Pax Roman մը տուաւ աշխարհին, աւելի մարդկային էր քան այժմու խաղաղութեան և արդարութեան առաքեալներու ձեռնարկները: Այն հին օրերուն, Հռոմէական իշխանութեան ենթակայ երկիրները գոնէ ազատ էին իրենց լեզուի, կրօնի և մշակոյթի մէջ:

ԺԸ. դարուն կրօնական և ցեղային թոյլտուութիւններ բարեացակամ ուշադրութիւններու արժանացան թէ՛ Անգլիական կայսրութեան սահմաններուն և թէ՛ Եւրոպայի մէջ: Պետութեան և

Եկեղեցիի բաժանումով համեմատաբար աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծուեցան փոքրամասնութիւններու համար: Առաջին Համաշխարհային Պատերազմէն առաջ, իսլամ երկիրներու մէջ բընակող քրիստոնեայ յարանուանութիւնները կը վայելէին որոշ ազատութիւններ: Հակառակ պարագային Եւրոպական պետութիւնները կը միջամտէին, մանաւանդ Թրքական կայսրութեան չըջանին, պաշտպանելու իրենց դաւանակիցները: Ռուսերը՝ Օրթոտոքսներու հաշոյն, Ֆրանսացիները՝ ի նպաստ Կաթոլիկներուն: Սակայն այս կիսամիջոցները, աւելի քաղաքական նպատակներով փորձուած, չատ քիչ բան կրնային փոխել կացութենէն: Ասիոյ խաւարը և մոլեռանդութիւնը, այդ օրերուն, այնքան խիտ էր որ ղանակով անգամ կարելի չէր կտրել:

Յեղային փոքրամասնութիւններ կան այսօր Եւրոպայի, Ռուսիոյ, Հնդկաստանի, Ամերիկայի, Ափրիկէի և Միջին Արևելքի մէջ, որոնք իրենց զգացումներով հաշտ չեն տիրապետող մեծամասնութեան հետ և միացող փայտերու նման յաճախ իրենց ծուխը կ'արձակեն: Ամերիկայի մէջ այս հարցը դիւրաւ լուծուող ճամբու մէջ եղած է միշտ: Իրենց կամքով հոն գաղթողները երկրի եւ ռացող կաթսային մէջ տակաւ կը հալուին ու կը ձուլուին, նման գետերու՝ որոնք իրենց անունները կը կորսնցնեն ծով թափելէ յետոյ: Եւ այս անոր համար, որովհետեւ Ամերիկա գաղթողները, բարձր մակարդակի վրայ, կը վայելեն քաղաքական ազատութիւն և տնտեսական հաւասարութիւն: Փոքրամասնութիւններու առնչութեամբ Ամերիկան ունի միայն Սեւրու հարցը, եթէ նկատի չառնենք երկրի նախկին բնիկները, որոնք վերջանալու մօտ են: Իսկ Գուանտալայի մէջ կայ Ֆրանսական փոքրամասնութիւն մը, որ տարիներէ ի վեր կը տանի իր պայքարը, պահելու իր լեզուն, աւանդութիւնները և ցեղային մասնայատկութիւնները, ցարդ գովելի յաջողութեամբ:

Միջին Արևելքի մէջ, ազգային զգացումներու բռնկումէն յետոյ, փոքրամասնութիւններու հարցը նոր դարձակէտի մը առջև է այժմ: Եգիպտոսի մէջ Անգլիական հոգատարութեան չըջանին և անկէ առաջ կը յարգուէին Ղպտիներու և միւս փոքրամասնութիւններու իրաւունքները: 1936ի Անկլո-Եգիպտական համաձայնագրին մէջ սակայն չէ յիշուած փոքրամասնութիւններու իրաւունքներու պաշտպանութեան պարագան: Սուրիոյ և Լիբանանի մէջ փոքրամասնութիւնները, ցեղային ու յարանուանական, համեմատաբար աւելի նպաստաւոր վիճակ ունին զոյգ երկիրներու կեդրոնախոյս գրութիւններուն պատճառաւ, սակայն ստատոյգիքի ներքեւ են միշտ: Կիպրոսի մէջ Թուրք փոքրամասնութիւնը մեծամասնութեան հաւասար իրաւունքներ ձեռք բերել կը փորձէ, կռիւնով իր ետև կեցող ուժին: Պաղեստինի մէջ, Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն յետոյ, Արաբ մեծամասնութիւնը տակաւ փոքրամասնութեան վերածուեցաւ, որուն հետևանքով ստեղծուեցաւ Պաղեստինի ողբերգութիւնը:

Համաշխարհային Բ. Պատերազմէն յետոյ, Եւրոպայի մէջ

Հիթլերական ռէժիմի հալածանքներու հետեանքով, ինչպէս նաև Պապեստինի ողբերգութեան պատճառաւ, գոյացաւ զաղթականներու ստուար թիւ մը, որոնք կը մնան իբրև փոքրամասնութիւններ գերենք հիւրընկալող երկիրներու մէջ: Միացեալ Ազգերու ժողովը տարիներէ ի վեր կը ջանայ գոհացնել անոնց տնտեսական և մասամբ քաղաքական պահանջները: Կայ տակաւին քրտական փոքրամասնութիւններու պարագան, Թուրքիոյ, Պարսկաստանի և Իրաքի մէջ:

Յարդ փոքրամասնութիւններուն ի նպաստ եղած պայմանագրութիւնները, որոնք մեծաւ մասամբ բարոյական յանձնառութիւններ են, քիչ անգամ արդարօրէն գործադրուած են: Միջադպային ամէն կարգի պայմանագրութիւն իրագործուիլ կարենալու համար ուժի կը կարօտի, և յաճախ անոնց ծնունդ տուող պայմանները աւելի մեծ արժէք կը ներկայացնեն քան նոյնինքն պայմանադրութիւնը: «Վեյմայ պարտութեան» հին Հռոմէական ասոյթը կը գործադրուի նաև այսօր, թէև ոչ հրապարակաւ, այլ քաղաքակրթական կեդժիքի քողին ներքև:

Այսօր սակայն պէտք է ի մտի ունենալ թէ փոքրամասնութիւններու խնդիրը, թիւէն անկախ՝ քաղաքական յղացք է այլևս, ուսին՝ մտքի բարձրութեան քաղաքակրթական ուժի տիրապետութիւն: Մեծամասնութիւն չի սահմանուիր բնակչութեան գերակշիռ թիւով կամ հողային տարածութեամբ, այլ արժէքով: Տեղին է ըսել թէ արդար է մեր պատմահայր Խորենացիին վերագրել տարազին հայրութիւնը, այսինքն ինչ որ Եւրոպական մտածողութիւնը այժմ կը կոչէ մեծ ժողովուրդ՝ մեծութեան մէջ որոնելով քաղաքակրթական կամ մշակութային փոքրամասնութիւնը, քանակներ է արդէն, դարեր առաջ, մեր պատմահայրը, Հայ ժողովուրդի թրական կամ հողային փոքրութեան մէջ ցոյց տալով ժամանակը նուաճող և յաւիտենականութիւնը հաստատող արժէք մը, որ ըստ Փրօֆ. Ադոնցի, աղգային տոկոսն գիտակցութիւն մը կ'ստեղծէ և կը դառնայ պատմափիլիսոփայութիւն մը՝ խորենացիականութիւն անունով:

Այս իրողութենէն վերջ, մեզի կը մնայ յայտարարել, թէ զրկուած մեր հայրենիքի մեծ մասէն և անոր տուած հպարտութենէն, ունինք սակայն փոքրիկ Հայաստան մը մեր պատմական հողերու մէջ մասին վրայ, իբրև կախարդ թթիմորը մեր վաղուան ումբողջական երազին: Կ'երջանականա՞նք գիտելով այդ կոտորակ Հայրենիքի շինարարական և ակադեմական նուաճումները, անոր մշակութային ու կրթական վերելքը: Ունինք նոյնպէս Հայկական արտասահման մը — այսինքն Հայութիւն մը որ դուրս նետուած է իր պատմական հողերէն:

Մեր առջև ունինք այս երկու իրականութիւնները, դէպքերու բերումով իրարմէ գրեթէ անկախ: Հայաստանը ունի իր կեանքի յատուկ ուղղութիւնը, որ առ այժմ վեր կը մնայ մեր հասողութենէն և նուազ ենթակայ է մեր մտահոգութիւններուն, իսկ արտասահմանը՝ իր ճակատագիրը: Անշուշտ իտէպլ մը չէ պահել Հա-

յութիւնը արտասահմանի մէջ: Բայց պէտք է պահպանել զայն մինչև այն օրը՝ երբ պիտի ստեղծուին հրամայական պայմաններ հայրենի հողերուն վրայ առաջնորդելու արտասահմանի պանդուխտները: Սակայն ինչպէ՞ս պահել Հայութիւնը արտասահմանի մէջ:

Կարելի է պահել Հայկական արտասահմանը նախ գործակցութեամբ Հայրենիքին, երկրորդ՝ շարժման մէջ դնելով Հայկական արտասահմանի բարիկամեցողութիւնները: Այս վերջին պայմանին համար հարկ է թարմացնել աշխատանքի մթնոլորտը, երիտասարդացնել երկակայութիւնը, քալել ժամանակին հետ: Ժամանակը այն ուժն է որ կը զօրացնէ կամ կը տկարացնէ զազաւիարները, կը յիշէ կամ կը բթացնէ միտքերը: Պէտք է գիտնալ անոր հետ քայլ փոխել, առանց սակայն ամբողջապէս իրեն ենթարկուելու:

Սփիւռքի Հայութիւնը պէտք է վարժեցնել որ ինքզինքը պանդուխտ նկատէ, ո՛ւր որ ալ ապրի: Չկորսուելու առաջին անհրաժեշտ զգացումն է ասիկա: Ս. Գրքի մէջ սրտագրաւ կէտ մը կայ այս զգացումը ներկայացնող: Մովսէս, Իսրայէլի մեծ առաջնորդը, որքան կրօնական, նոյնքան և քաղաքական դործիչ, իր ժողովուրդը դէպի իր նախնեաց կամ Աւետեաց երկիրը առաջնորդելու ատեն, առաջին քայլափոխին, երբ իր անդբանիկ զաւակը ունեցաւ, Գեքսամ (պանդուխտ) կոչեց զայն. իր միտքն էր հասկցնել ժողովուրդին թէ՛ հայրենիքին յոյսը շթառամեցնելու համար իր հոգիին մէջ՝ պէտք է գիտնար ու յիշէր միշտ թէ պանդուխտ է ինքը իր գտնուած երկրին մէջ:

Այս պատկերը մեզի ալ պէտք է խօսի:

Ե.



# ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ս. Էջմիածին, Ս. Զատիկ 1976

Նորին Ամենապատուութիւն  
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրստեբան  
Պատրիարք Երուսաղէմի Հայոց  
Ե Ր Ա Ս ա զ է մ

## ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

Մեծ աւստիսը մեր Տիրոջ և Փրկչի երաշալի Յարութեան, մեր սրտերը վերստին կը լեցնէ լոյս զգացումներով և սուրբ սպասումներով:

Փրկչի Իյսման նուիրական Սեղանի առաջ ազօրոգ ենք որ փրկարար այս աւստիսի շնորհները առատապէս բաշխուին մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, որպէսզի ամենք կարող ու արժանի դառնան «որդիք լուսոյ», կոչուելու, միշտ ամենք մեր նախնեաց հաւատքի վեմին վրայ, միշտ հաւատարիմ Հայաստանեայց մեր Մայր Եկեղեցւոյն, միշտ պատրաստ՝ բարին գործելու իրենց կեանքի նսնապարհին:

Մեր մշտանորոգ սաղփանքն է նաեւ որ յարուցեալ Փրկչի՝ աշխարհին թողած խաղաղութեան ոգին, աւելի ու աւելի ճառագայթէ մարդոց ու ազգութիւններու հոգիներէն ներս, առաջնորդելու համար զանոնք դէպի նաւահալ զիստը արդար ու համերաշխ զայակցութեան, յերջանկութիւն բոլորին անխրտիք:

Սուրբ Յարութեան ուրախութեամբ, եղբայրական սիրով կ'ողջունենք Զերդ Ամենապատուութիւնը և մեր ամենաբարի սաղփանքներն ու օրհնութիւնը կը բերենք Սուրբ Աթոռիդ զինուորեալ միաբանութեան և համայն մեր հաւատացեալ ժողովուրդին:

«Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այսուհետեւ ոչ մեռանի, մահ նա ոչ ևս տիրէ: Զի որ մեռում՝ մեղացն մեռաւ միանգամ, և որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ: Նոյնպէս և դուք համարեցիք զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռոմ. Զ 9-11):

Օրհնեալ է լոյս Յարութիւնն Քրիստոսի, այժմ և յաւիտեան. ամէն:

Վ Ա Զ Գ Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԱՍՏՈՒԱԹԱԲԱՆԱԿԱՆ

## ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ

216. ՓԱՍՏԳ ՍՈՒՐԲԵՐՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆ-  
ՔԻՆ. Ընդհանուր սովորոյթ է մարդկութեան  
որ զանոնք որ իրեն երախտաւորներ կը ճանչ-  
նայ, կամ իրենց գործերովը դարձանալի,  
կամ կեանքովը օրինակելի, անոնցմէ իրեն  
համար պաշտամունքի, պատուոյ և յարգանքի  
առարկայ եղողներ կ'ընտրէ իր սրտի բեր-  
մանց համաձայն, առանց խտրութիւն զնելու  
ողջ կամ մեղած եղողներուն: Կը մեծարէ իշ-  
խանները և պետերը, զրոգները, բարերար-  
ները և որեւէ հոգևոր թէ մարմնաւոր ձիրքե-  
րով փայլածները: Կը մեծարէ զանկանները  
և աջակիցները, իշխանաց և մեծամեծաց ըս-  
պասաւորներն ու պաշտօնեաները, նշանաւոր  
անձնաւորութեանց մեծաւորները կամ ժա-  
ռանգները, բարիներու և քաջիբու, բարե-  
գործներու և քաջագործներու յիշատակները:

Երբ մարդկային ամէն ընկերութեանց մէջ  
այսպէս է իրականութիւնը այդ մասին, մի-  
թէ բանաւոր չէ՞ որ Եկեղեցին ևս այդպէս  
վարուի իր ըմբռնումին և սկզբանց համեմատ  
բարի և բարեգործ ճանչցուածներուն վերա-  
բերմամբ: Զգուշանալի է անշուշտ որ սուր-  
բերուն ընծայուած պաշտօնը չչփոթուի աստ-  
ուածայինին հետ, որ քաջագունները դիւ-  
ցազաններուն հետ չխառնուին, և դիւցա-  
զունները աստուածներ չհամարուին: Այս  
զեղծումէն շատ հեռու է հիմնական սկզբուն-  
քը քրիստոնէութեան, որմէ աւելի ամուր կը-  
րօնական դրութիւն մը չկայ արդարեւ պահ-  
պանելու համար Աստուծոյ ստորոգելիները:  
Ուստի և իրաւամբ կ'ըսէր Լալայեցի, բողո-  
քական իմաստասէրը. «Հարկ է գիտնալ թէ  
սրբոց կամ նշխարներուն պաշտօնը այնքան  
ատեն կրնայ մնալ, որքան ատեն Աստուծոյ  
կը վերաբերի ան, վասնզի չի կրնար ըլլալ և  
ոչ մէկ կրօնական գործ որ ի վերջոյ չվերած-  
ուի կամ չյանդի մի և ամենակալ Աստուծոյ: Ըստ  
ի և երբ սուրբերը կը պատուուին, այն-

պէս հարկ է իմանալ զայն ինչպէս Ս. Գիրքը  
կ'ըսէ. «Ինձ յոյժ մեծարոյ եղեն բարեկամք  
քո, Աստուած» (Սաղմ. ԶԼԸ 17). կամ՝ «Օրհ-  
նեցէք տէրուս ևս որ արքայսն ի նորա»  
(Սաղմ. ԶԾ 1): Ստոյգ է թէ Եկեղեցւոյ երկ-  
րորդ դարուն կը կատարուէին արդէն մար-  
տիրոսաց վկայութեան յիշատակի օրերը, և  
անոնց շիրիմներուն վրայ սուրբ համախմբու-  
թիւններ հաստատուած էին:

217. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՊԱՇՏՅՈՒՆ  
ԴԵՄ. Մեզի անծանօթ չէ աստուածային ճը-  
րամանը թէ զի Տեսնենք Աստուծոյ քումէ  
երկիցես և զնա միայն պաշտեսցես» (Բ Օրին.  
Զ 13), զոր Քրիստոս ալ կը կրկնէր փոքո-  
ղին զէմ, թէ «Գրեալ է, Տեսնենք Աստուծոյ  
քում երկիր պաղցես և զնա միայն պաշտե-  
ցես» (Մատթ. Դ 10): Յայտնի են Պողոսի  
խօսքերն ալ. «Միոյն Աստուծոյ փառք և պա-  
տիւ» (Ա Տիմ. Ա 17): Համաձայն աստուա-  
ծային պատգամին, «Զփառս իմ այլում ոչ  
տաց» (Ես. ԽԲ 8): Գիտենք Պետրոսի խօսքն  
ալ, երբ Կոռնելիոս զանկեալ ան ոտսն երկիր  
պագանէր», յանդիմանելով կը կասեցնէր.  
«Յոտն կայ, և ես ինքն մարդ եմ» (Գործք.  
Ժ 25, 26): Նոյնպէս կը պատմուի տեսնու-  
ղին տեսիլքին մէջ, երբ Յովհաննէս երէցի մը  
ոտքը ինկած կ'երկրպագէր անոր. «Անա՛ս,  
մի՛ անկանիր առաջի իմ, քանզի և ես ծառա-  
յակից քո եմ և եղբարց քոց որք ունին զվկա-  
յութիւնն Յիսուսի Քրիստոսի. Տեսնենք Աս-  
տուծոյ միայն երկրպագեալ» (Յայտ. ԺԹ  
10):

Բայց այս բոլոր հրամաններուն և յանդի-  
մանութիւններուն մէջ միշտ կը գտնենք ար-  
գելը՝ Աստուծոյ համեմատուած պաշտօնը չը-  
տալու սուրբներուն և հրեշտակներուն, կամ  
առ առաւելն չգործածելու այն ձևերը և կեր-  
պերը որոնք Աստուծոյ միայն պահուած են,

և ոչ թէ մեծարանք չտալու արժանաւորեալութենէ՝ իրենց արժանաւորութեան համեմատ։

Պաշտօնութիւն և պաշտօն բառերն ալ պէտք չէ տհաճութիւն պատճառեն, զի անոնց ընդհանուր իմաստն է սպասարկութիւն, ոչ ալ երկրպագութիւն բառը, որուն դործածութիւնը անսովոր չէ երբեք նոյնիսկ մարդոց մէջ իրարու հանդէպ։ Հետեալաբար բաւական է ուշադիր ըլլալ միայն պաշտամունքի երկու կերպերուն։ Եւ այն որ կատարեալ է և է «յինքեան», և այն որ մասնակի է և յարաբերական։ Ու այս երկրորդն է որ մենք արժան կը դատենք Աստուծոյ սիրելեաց համար, ու այդ կերպով բնաւ ուրացած չենք ըլլալ թէ ճշմարիտ և բացարձակ պաշտօնը Աստուծոյ է և ոչ թէ ուրիշին։ Նաև, եթէ Ս. Հարց գիրքերուն մէջ պատահի մեզի կարգալ թէ պէտք չէ պաշտել սուրբերը, պէտք է յիշել թէ նոյն Ս. Հայրերն են որ մեզի սորվեցուցին սրբոց յիշատակները տօնախմբել, և այդ արգելումով անոնք չէին կրնար ուրիշ բան հասկնալ եթէ ոչ բացարձակ և ճշմարիտ պաշտօնը՝ զոր լաւ դիրական կոչեցինք։

218. ՁԵՒԵՐՈՒ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ. Գալով պաշտամունքի տեսակ տեսակ նշաններուն, հարկ է վերստին յիշել թէ չկայ որեւէ գործ կամ ձև որ ըստ ինքեան ունենայ լազրիական իմաստ և չկարենայ փոխանակուիլ տուլիականին հետ։ Նոյնպէս, ընդհանուր սովորութիւն մը նուիրագործած է ինչ ինչ ձևեր և գործեր, զոնէ որոշ յղմանակներու, տեղերու և ժամանակներու մէջ, անոնց հետ կապելով յատուկ և սահմանուած իմաստներ՝ զորս կարծէք զլացած է ուրիշներուն։ Պաշտամունքի այդ կարգի գործերուն մէջ կրնանք յիշել սրբոց տօները, որովհետև տարուէ տարի կը կատարենք հանդիսութիւններ ի պատիւ անոնց, կ'երգենք անոնց զովաբանութիւնները և կը փառաւորենք անոնց անունները։ Իսկ եթէ տօն բառը ծանր կու գայ, Եկեղեցին, աւելի ճշգրտանելով կարծէք, երբեմն աւելի կը սիրէ ըսել «սրբոց այսօր» քան չափազանց, քան ըսել «սրբոց տօն է այսօր»։ Իսկ տօն յորընդումը աւելի երգերուն ճերթողական ասացուածքներուն մէջ է որ կը գործածուի։ Յայտնի է թէ յիշատակաց օրերու ցուցակը կը կոչուի «Տօնացոյց», բայց ստիկա

ժողովրդական կոչում մըն է, մինչ ժամագրեաց մաղթանքը միշտ կը նախընտրէ յիշատակ բանաձևը։ Իսկ յիշատակները կը կարգացուին նաև բոլոր ականաւոր անձանց և երախտաւորաց համար, և յիշատակեալներուն մէջ բարի գործեր կամ ընդունուած երախտիքներ միայն կը յիշատակուին, բարիքներ՝ զորս մարդիկ կը սիրեն հրճուանքով միայն յիշել։ Մինչև այսօր ամէն տեղ կը կատարուին տարեդարձներ, կը զովարանուին անձեր, կը պատմուին անոնց արդիւնքները, կը փառաբանուին անոնց անունները։ Իրենց ծագմանը մէջ նոյն կերպով պէտք է հասկնալ տօներն ալ, զորս Եկեղեցին կը կատարէ իր երախտաւորներուն համար, որոնք կամ անձ նագոհութեամբ, կամ ճրտնաթոր ջանքերով և կամ գովելի արդիւնքներով նշանաւոր հանդիսացած են անցեալին մէջ։

219. ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ԱՂՈՒԹ. Բայց կայ կէտ մը, որով սուրբերուն տօները կը տարբերին ոչ-կրօնական տօներէն, ու եկեղեցական յիշատակները՝ քաղաքական յիշատակներէն։ Եւ այդ է այն աղօթքը կամ մաղթանքը զոր հաւատացեալները կը մատուցանեն յանուն սրբոց։ Քաղաքական տօներուն մէջ երբեք չենք ականաւոր, յիշատակութեանց ընթացքին, նոր նպաստներ ընդունիլ յիշատակուածներէն։ Կը բաւականանանք միայն ընդունուած փառքի և նպաստի յիշատակութեամբ։ Այդ տարբերութիւնն է սրբոց բարեխօսութեան վրայ յուզուած խնդիրը, որուն դէմ կը մաքառին արևմտեան նորադանները։ Բայց սուրբերուն մատուցուած աղօթքը և անոնց ընծայուած աղերսները նոր բան մը չեն, և կ'արդարանան ևս սովորական սկզբունքներով, մանաւանդ թէ տարբեր ալ չեն մարդոց նոր սովորութիւնէն։ Երբ վախճանեալներու յիշատակներ կը կատարուին քաղաքական կեանքի մէջ, անոնց հետ յարաբերութեան ձևեր, խօսքեր կամ գործեր չեն լինիր, զի ողջերուն և մեռածներուն միջև քաղաքական ոչ մէկ առնչութիւն չէ կարելի ըմբռնել։ Իսկ երբ ողջերուն համար կը լինին տօնախմբութիւնները, որովհետև անոնց հետ քաղաքական յարաբերութիւնք չեն խղուած և բաց են նոր ականաւորութեանց գոնիքը, բովանդակ տօնախմբութեան մէջ զի-

առաջ մը կը զգացուի, և անշուշտ իրաւամբ, առնելիքներէն ակնկալելու նոր արդիւնքներ, նոր նպատակներ կամ որեւէ ուրիշ շահեր՝ որոնք առկալին չեն եղած: Եկեղեցին Հոգեկան է, և իր յարաբերութիւնները Հոգեկան են, ըստ իր սկզբունքներուն: Իր յարաբերութիւնները վախճանեալներուն հետ չեն դադրած, անոնց առնչութիւնները չեն խզուած ողջերուն հետ, և իբրև ողջեր՝ ողջերու հետ Հաղորդակցութեան մէջ են անոնք Հոգեւորապէս: Ննջեցեալներուն վերաբերմամբ քրիստոնէական հաւատքը այս է: Անտեղի՞ է ուրեմն որ իբրեւ Հոգեկան կարգին մէջ միևնոյն կերպով աղերսներ մատուցուին բարի և բարեգործ ննջեցեալներուն, ինչպէս քաղաքական իրաց կարգին մէջ կը մատուցուին ազերսներ բարի և բարեգործ ողջերուն:

220. ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ ԱՂՈՒԹԻՒՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ. Այս վարդապետութիւնը կը վերաբերի բուն այն աղօթքներուն, որոնք սուրբերուն կ'ուղղուին, և կը կոչուի «խնդիր բարեխօսութեան սրբոց», և կը պարունակէ հետևեալ պայմանները. Նախ թէ՛ սուրբերուն դիմելու անտեղի բան մը չէ. երկրորդ՝ օգնութիւն և շնորհներ կ'ակնկալենք ոչ թէ՛ սուրբերէն, այլ Աստուծոյ, սուրբերու միջնորդութեամբ: Սուրբերուն միջնորդութիւնը իր զօրութիւնը կ'առնէ Քրիստոսի և ոչ թէ՛ իրենց արդիւնքներէն. այնպէս որ աւելի ի զէջ պիտի ըլլայ այդ միջնորդութիւնը իսկական միջնորդութենէ աւելի՝ կուրծի երկրորդական միջնորդութիւն: Երրորդ՝ սուրբերուն միջնորդութիւնը անպատու և ապարդիւն չէ, և որեւէ կերպով կը նպաստէ մեր Հայցածններուն ընդունելութեան: Բարեխօսութեան խնդիրը ուրեմն չունի այն ընդարձակութիւնը, զոր ի զուր անոր կու տան Հակառակորդները, որպէսզի իրենց Հնարաւոր ըլլայ գոհարութիւններ հանել անկէ:

221. ՍՐԲՈՑ ԲԱՐԵՒՍՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԵՐԸ. Ի Հաստատութիւն այն վարդապետութեան որ կը պաշտպանէ սուրբերուն մատուցուած աղօթքը և անոնց բարեխօսութիւնը, կրնանք ուրեմն անխտիր կերպով այն խօսքերը որոնք ողջերուն և մեռածներուն կը վերաբերին, որովհետեւ քրիստոնէական հա-

ւատքի տեսակէտով միևնոյն բանը ըսել է ողջերու՝ իրարու աղօթք խնդրելը, կամ իրարու համար աղօթելը, և ևս ողջերու և մեռածներու փոխադարձաբար նոյնը ընելը: Ըստ այսմ, մեր խօսքերուն ի ճշտ կու գան Պօղոսի կողմէ հաւատացեալներուն ուղղուած սա յանձնարարութիւնները. «Աղաչեմ զձեզ, եղբարք, ի ձեռն Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի և սիրով Հոգւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուծոյ» (Հռոմ. ԺԵ 30). և թէ՛ «Տքնեսլիք ամենայն ժուժկալութեամբ և խնդրուածովք վասն ամենայն սրբոց և վասն իմ» (Եփես. 2 18). և թէ՛ «Աղօթս արարէք և ի վերայ մեր» (Ա Թես. Ե 25):

222. ՓԱՍՏԵՐ ՍՈՒՐԲ ԳԻՐԳԷՆ. Սուրբ Գիրգին մէջ պակաս չեն օրինակներ, որոնցմով կը հաստատուի թէ՛ աղօթքին արդիւնքով սուրբերը և Հրեշտակները կը բարեխօսեն մարդոց համար: Աստուած կ'ընէր Երեմիայի. «Եթէ կացցին Մովսէս և Սամուէլ առաջի երեսաց իմոց, ոչ եղիցի անձն իմ ընդ նոսա: Ի թաց արձակեալ զժողովուրդդ զայդ յերեսաց իմոց» (Երեմ. ԺԵ 1): Ուրեմն հնար էր Մովսէսի և Եղիայի՝ միջնորդել Աստուծոյ, ժողովուրդին փրկութեան համար: Նաև Զաքարիա կը տեսնէր Հրեշտակը որ Աստուծոյ կ'աղօթէր ժողովուրդին համար, և կ'ըսէր. «Տէր ամենակալ, մինչև ցե՞րբ ոչ ողորմեսցիս ի վերայ Նրուսաղէմի և քաղաքացն Յուդայ, զորս անտես արարեր» (Զաք. Ա 12): Նոյնը չէ՞ որ պիտի կարենանք եղրակացնել, ըսելով թէ Իսրայէլ կը մարտնչէր ժողովուրդին համար Պարսից իշխանին հետ, և թէ Միքայի՝ մին երկնային զօրաց առաջին իշխաններէն, «եկն օգնել նմա», ինչպէս կը պատմուի Դանիէլի տեսիլքին մէջ (Դան. Ժ 13):

Այս ամէնը կը հաստատեն թէ Հրեշտակները և ննջեցեալ արգարները կ'աղօթեն ողջերուն համար ու աղ իսկ Հիմն է սրբոց բարեխօսութեան: Այս միտքով կարելի է մեկնել նաև Յայտնութեան այն խօսքը, ուր կը տեսնուին ջառնչորս եղէցներ, որոնք ի ձեռին ունին զօրովառ սուկի լի խնկով, որ է աղօթք սրբոցն» (Յայտն. Ե 8): Ասոնց վրայ աւելցուցէք ստակաւին Աստուծոյ Հրամանը Յորի

բարեկամներուն, դիմելու անոր, «զի Յոր ծառայ իմ արասցէ աղօթս վասն ձեր»։ Վասնդ իրենց ալ առաջ խառտ կուտային անոր. «Արդ ալէ կարդա, թէ ոք տացէ՞ քեզ ձայն, կամ թէ զոք ի Հրեշտակաց սրբոց տեսցնո՞ւ» (Յոր ԽԲ 8, Ե 1)։ Ինչպէս որ կը կանչէին Բարեկամի մանուկները. «Վասն Արքաւամու սիրելւոյ զո ե վասն Իսահակայ ծառայի զո ե վասն Իսրայէլի սրբոյ զո (Դան. Գ 35)։

223. ՓԱՍՏ ԱՒԱՆԴՈՒԹԵՒՆԷ. Առաջին ե Հիմնական փաստը, աւանդութենէ Հանուած, ճախադրութեան փաստն է, որովհետեւ ինչ որ այսօր կայ ե կը կատարուի բոլոր Հնա. գոյն, աւանդական ե ծիսական եկեղեցիներուն մէջ, կար ե կը կատարուէր նախկին դա. բերողն ես, ե անկարելի է ցոյց տալ այն դա. բը եր սովորութիւն չկար ե կամ երբ ան մուծուեցաւ ի նորոյ։ Ասոնց վրայ պէտք է աւելցնել նաեւ ծիսարաններուն Հաւատքը, ուրոնք թէև դարուց ի գարս ճոխացան ե աճե. ցան, բայց անոնց մէջ հակասները նախա. կաններն են, Հիմնաւորք՝ որ մինչև առաքե. ւոց ժամանակները կը Հասնին։

Ստույգ է անշուշտ թէ սրբոց բարեխօսու. Թեան խնդիրը Ե Դարուն է որ սկսու. յուգ. ուիլ. բայց ասիկա վարդապետութեան ոչ թէ նորութիւնը ցոյց կու տայ, այլ՝ ստուգու. Թիւնը ե Հնութիւնը, Մարտիրոսներուն միջ. նորութեան կամ մարտիրոսութեան Համար ապաշխարողաց շնորհուած ներողութիւնն. րը նշաններ են այս վարդապետութեան Հը. նութեան, ինչպէս նաեւ մարտիրոսներուն չի. բիմներուն արձանագրութիւնները ե անոնց վկայարանութեանց վերջաբանները, որոնց մէջ ակներեւ կը հայցեն վկաներուն միջնոր. դութիւնը։

224. ԲԱՐԵԽՈՍՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԱՌԱՐԿՈՒ. ԹԻԻՆՆԵՐ. Ըստ կարծեաց Հակառակողնե. ռու, բարեխօսութեան վարդապետութիւնը Համապատասխան չէ ճրիստոնէական վար. դապետութեան Հիմնական սկզբունքներուն, որ կ'ստուգանէ։

Ա. Զբոհատո միայն ճանչալ միջնորդ. չՄի միջնորդ Աստուծոյ ե մարդկան, մարդն Յիսուս Քրիստոս» (Ա ՏԻԺ. Բ 5) Կ ե

- բ. Դիմել միայն անոր՝ որուն կը Հաւա. տայ. «Քիսկ դիմողը կարդացեն յոր ոչ չըն Հաւատացին» (Հոմմ. Ժ 14), ե
- գ. Դիմել միայն անոր որ կարող է, ե ընդունուած բարութեանց խոստովա. նութիւնը իրեն միայն ընծայել. «Որո. տովան եղբուր Տեառն ե կարդացէք զանուն նորա» (Սաղմ. ձԴ 1), ե
- դ. Ընդունելի են միայն Քրիստոսի ան. ուամբ եղած խնդրանքները. «Զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմէ յանուն իմ՝ տացէ ձեզ» (Յովհ. ԺԶ 23), ե
- ե. Անէծքի սպառնալիքով արդիւրուած է յուսալ մարդոցմէ. «Անիծեալ լիցի մարդ, որ արասցէ զյոյս իւր ի մարդ» (Երեմ. ԺԷ 5)։

Բայց այս ե այս կարգի խօսքերը պաշտա. մունքին, աղօթքին ե յոյսին վերջին ե բա. ցարձակ նպատակին ե որ կ'ակնարկեն. կը խօսին միջնորդութեան արդիւնքին ե մա. տուցուած փրկանաց մասին, ու չեն մերժե. րնաւ. նոյն նպատակին մօտենալու նպատն ու աջակցութիւնը։

Սուրբերուն երբեք չենք ընծայեր բան մը որուն վերջը ի Քրիստոս չյանգի, ու ոչինչ կ'ակնկալենք անոնցմէ՝ իբրեւ թէ իրենց մի. ջոցաւ կատարելի. այլ միայն զանոնք՝ կ'ը. նենք ընտրելազոյն ծառայակիցներ, որոնք մենէ աւելի Համարձակութիւն ունին մեր Տի. րով առջև։ Այս մեկնութեան ճշգրութիւնը վե. րեւ յառաջ բերուած առարկութեան մէջ է նոյնիսկ. «Անիծեալ լիցի մարդ, որ արասցէ զյոյս իւր ի մարդ», որուն իմաստը լրացնե. լու Համար կը յարէ Սրեմիա. «Եւ ապատա. մ. րիցէ ի Տեառնէ սիրտ նորա» (Երեմ. ԺԷ 5)։

## 225. ՊԱՅՄԱՆՔ ԲԱՐԵԽՈՍՈՒԹԵԱՆ.

Բայց որպէսզի կարելի ըլլար իրական Համա. րել սրբոց բարեխօսութիւնը, պէտք էր որ

ա. Միջոցներ ունենայինք փոխանակելու իմ խորհուրդները, ե մեր միտքերը Հաղորդելու անոնց՝ որոնք այլևս աշ. խարհի վրայ չեն. ինչ որ մեզի կը պակսի բացարձակապէս։

բ. Պէտք էր որ անոնք որ ոչ ես են յաշ. խարհի՝ միջոցներ ունենային իմանա. լու մեր Հայցուածքները, մինչ ընդ. Հակառակն, ըստ Ս. Գրոց, ՎՄԵԼԵԱՆ.

քրն ոչ են դիտակ և ոչ իմիք» (Ժող. Թ 5), որուն համար մարդարէն ի դիմաց ժողովուրդին կ'ըսէր Աստուծոյ. «Աբրահամ ոչ գիտաց զմեզ և Իսրայէլ ոչ ծանեալ զմեզ, այլ դու, Տէր, Հայր մեր, փրկեալ զմեզ» (Ես. ԿԳ 16) :

գ. Պէտք էր գիտնալ թէ սուրբերը, որոնց կը դիմենք, տառապեալ առձեռնաբար ինքններէն են, և թէ արդար և արդարացեալ են արդեօք Աստուծոյ առջև. մինչդեռ երկրայական է առաջինը, անյայտ է վերջինը: Հարկ էր վերջապէս որ գիտնայինք թէ մեռեալներուն կացութիւնը ունի՞ր գործունէութեան միջակներ, մինչ, ընդհակառակն, ըստ քրիստոնէական դրութեան, այլևս աշխարհի վրայ չեղողները ի վիճակի չեն գործունէութեան, այլ կատարեալ անգործութեան մէջ են, որուն համար անոնք իրենց համար նոյնիսկ չեն կրնար որևէ արդիւնք մը ձեռք բերել, կամ բարի կամ չար գործ մը կատարել. այլ կը մնան ինչպէս որ էին, անկարող՝ փոփոխելու իրենց վախճանական կացութիւնը:

226. ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԱՅՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ. Կարելի չէ անգիտանալ թէ այս խնդիրներուն լուծումները կը նպաստեն առաջագործութեան, բայց ոչ թէ ըստ էութեան և գոյութեան ճշմարտութեան, այլ ըստ եղանակի բացայայտութեան և մեկնաբանութեան. ու մենք գիտենք թէ ճշմարտութեան գոյութիւնը անկախ է անոր բացատրութենէ: Արդ, թէ ի՞նչ կերպով և ինչպիսի՞նչ նշաններով կամ միջոցներով մեզի հընար պիտի ըլլայ մեր խորհուրդները հասցընել ննջեցեալներուն, կամ թէ անոնք ի՞նչ կերպով պիտի կարող ըլլան իմանալ մեր խորհուրդները, այդ մասին ոչինչ գիտենք: Սակայն Գրիստոս կը հաւատալ մեզի թէ չուրախութիւն եղիցի առաջի Հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միայ մեղաւորի որ ապաշխարեցէս (Ղուկ. Բ 11), ինչ որ չէր կրնար

ըլլալ եթէ Հրեշտակները չձանօթանային մարդոց գործերուն: Ու Պատմոսի տեսանկյուն կը պատմէ թէ «ել ծուխ խնկոցն՝ աղօթք սրբոցն ի ձեռաց Հրեշտակացն առաջի Աստուծոյ» (Յայտն. Ը 4): Արդ, ինչ որ Հրեշտակաց, այսինքն աննիթական և աշխարհի հետ անհաղորդ կականերու համար կ'ըսուի, պէտք է ըսուի նաև մարմինէն մերկացածներուն համար, որոնք այլևս Հրեշտակներուն պէս են: Ժողովողին խօսքը կը վերաբերի սովորական և կենցաղական դրութեան և երկրի վրայ եղողներուն, որովհետև մեռելները այլևս կեանք չունին երկրի վրայ և ոչ ալ մասնակցութիւն մարդկային ընկերութեան հետ: Բոյորովին տարբեր է Հոգեպետ Հաղորդակցութիւնը որուն մասին կը խօսինք: Իսկ ինչ որ Աբրահամու և Յակոբայ մասին կը գրէ մարդարէն, բաղդատական է սովորական երբայարանութեան համաձայն, կամ թէ պարզապէս կը թուի ենթադրել թէ Աբրահամ և Յակոբ առաջ կը պաշտպանէին, ինչ որ Հիմա այլևս չեն ընել: Բայց թէ ննջեցեալներ ինչպէ՞ս գիտակ կ'ըլլան մեր Հայցուածներուն, սովորութիւնը որուն մասին թէ աստուածային մասնաւոր անօրինութեամբ մըն է որ կը կատարուի ատիկա. բայց չենք կրնար ոչինչ ճշգիւլ այդ մասին, և Ս. Գրիգոր և եկեղեցական աւանդութիւնը կատարուածին կերպին մասին է միայն որ մեկնութիւններ կու տան մեզի:

227. ԶԱՆԱԶԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Գալով սուրբ կոչուածներու պատմական գոյութեան և անոնց արդեանց ու արժանեաց ստուգութեան, այդ ամէնը ոչ մէկ կերպով կապ ունի վարդապետութեան հետ: Այնպէս որ եթէ այդ տեսակէտով սխալմունքներ եղած լինին անգամ, և եթէ յիշատակութիւն անմիջք որոնք ընաւ գոյութիւն չեն ունեցած, կամ եթէ իբրև սուրբ Հռչակուած լինին անմիջք որոնք այդպէս կոչուելու արժանի չեն իրապէս և ոչ ալ ընտրեալներուն հետ զատուելիք, սխալանք պատմական եղած կ'ըլլայ և ոչ թէ դատանական: Ու վարդապետութիւնը կը մնայ անյողդողդ:

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Գոյութիւն չունին չարն ու բարի,  
Կան միայն զօրաւորն ու տրկար,  
Կան միայն յազթողներն ֆաշարի,  
Եւ միայն պարտուողներն ապիկար:

Վերջնական վրնիռն է լոկ իրաւ և արդար,  
— Գեղեցիկն ու տրգեզն և չարը ու բարին,  
Մայր երկիր, ծոցիդ մէջ՝ նոյնաձև, նոյնատարր,  
Անցաւ ու աննախանձ իրարու պիտ' փարին:

Ինչ որ կը տեսնես՝ չէ լոկ ծով, լեռ, դաշտ,  
Ներքևն անոնց կայ խորհուրդ մը մըթին.  
Մեղք այն մըտփին որ՝ անյոյս և անհաշտ,  
Զորոտիր իմաստը այդ խորհուրդին:

Ա՛յո, ի՞նչ ֆաղցր է սիրով անճար  
Նայիլ ու զարմանալ,  
Ոչինչ ուզել, ոչինչ տեսնալ,  
Լուծուիլ, համայնանալ:

Կ'սիրեմ ձեզ ծառ ու ծաղիկ,  
Հովիտ ու դար ու դաշտ,  
Ինծ' պէս դուք ալ էք խաղալիկ  
Ոյժի մը ինքնապաշտ:

Ինծ' զարնողք՝ իմաստութիւն տուաւ ինծի ցաւին հետ,  
Ցաւը իմս է, ինձ հետ պիտի լուծուի հողին մէջ անհետ.  
Դուք որ վազը պիտի անցնիք կախարդական այս նամբէն,  
Իմաստութիւնն անա ձեզի կը կըտակեմ ես յաւէտ:

Հէյ ցա՛ն, կեանքը՝ երագի պէս անցաւ, կարծես ես դեռ փուն,  
Կը նայիմ այժմ իր ետեւէն՝ կարօտով ֆաղցր ու տըրտում.  
Աւերակ է տեղը հիմա իմ երագիս Ոստանի,  
Աւերակը ի՞նչ ընեմ ես, հեղեղը թող գայ-տանի:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԷՑ ՎԱՅԿԱՑԻ

(1263 — 1293)

ԺԳ. Դարու երկրորդ կիսուն Կիլիկիոյ մէջ ապրող նշանաւոր գրիչներ կարիչներէն մին է Ստեփանոս Երէջ Վահկացի, ձեռնառուն աշակերտ Յովհաննէս Արքայեղբոր: Իր գրչագրական աշխատութիւններէն ծանօթ են աւելի քան մէկ երկոտանեակ երկեր՝ պտուղ երեք տասնեակ տարիներու: Ան ընդհանրապէս ապրած և գործած է Կիլիկիոյ մայրաքաղաքին՝ Սիսի մէջ: Ժամանակագրական կարգի համաձայն իր երկերը կրնանք թուել սապէս.

1.— Աստուածաշունչ (մասնակի), օրինակած է 1263—1266 թուականներուն, Բարձրբերդի մէջ, Յովհաննէս Արքայեղբոր հրամանով.— Ձեռ. Երևւանի, թիւ 4243:

2.— Նոր Կտակարան (մասնակի), օրինակուած Գոնբերի մէջ, Աւղղի Կոստանդին գրչի ձեռքով, 1265 թուին, Յովհաննէս Արքայեղբոր համար: Ստեփանոս Վահկացին և Գրիգոր Պիծակ կատարած են ծաղկումը.— Ձեռ. Երևանի, թիւ 196: Հմմտ. Հասկ Հայագիտական, Բ. Տարի, Անթիլիաս, էջ 58, Գարեգին Կաթողիկոս:

3.— Աստուածաշունչ (կիսատ), օրինակած է 1268ին, Յովհաննէս Արքայեղբոր պատուէրով.— Հմմտ. Հասկ Հայդ. Բ. էջ 59:

4.— Յաղագս Յրկնայնայն Գաեանայապետութեան Դիոնէսիոս Արիսպագացիի, օրինակած է 1271ին, Յովհաննէս Արքայեղբոր համար, Յովհաննէս գրչի հետ միասին.— Զարհանէլեան, Թրգմ. Նախնեաց, էջ 390:

5.— Աւետարան, 1274ին օրինակած և նկարազարդած է Սիսի Ս. Նշան Վանքին մէջ, Օշին Մարջախտի համար.— Ձեռագիր ի Նիւ Եորք (Նախապէս Պալեան Տրդատ Եպիսկոպոսի).— Հմմտ. Հասկ Հայդ. Բ. էջ 61, 64: Հանդէս Ամսօրեայ, 1898, էջ 244-247:

6.— Ժամագիրք, օրինակած և նկարազարդած է 1274ին, Սիսի մէջ, Լևոն Բ. Թագաւորին համար.— Ձեռ. Պր. Ժան Լէվիի.— Հմմտ. Սիոն, 1949, էջ 137: Սիւրմէեան, Յուլցակ Ձեռ. Եւրոպայի, թիւ 23, էջ 36-42: Հասկ Հայդ. Բ. էջ 49-57:

7.— Աւետարան, օրինակած է Կոստանդին Քհն. Աւղղի, 1274-5ին, Գոնբերի մէջ. Ստեփանոս Վահկացին խորանները ուղուազծած է միայն՝ առանց գունաւորելու: Կազմող՝ Վանական Քահանայ (1276): Ստացող՝ Դաւիթ Քահանայ.— Ձեռ. Երևանի, թիւ 7534: Հմմտ. Հասկ Հայդ. Բ. էջ 59:

8.— Աւետարան, օրինակած է 1279ին, Սիսի Ս. Հոգի Վանքին մէջ, Սոսթենէս Վարդապետի համար.— Հմմտ. Կոնիքի, Յուլցակ, թիւ 8: Զարբ., Պատմ. Հայ Հին Դպրութեան, 1932, էջ 797-8: Հասկ Հայդ. Բ. էջ 59:

9.— 1280ին Սիսի մէջ օրինակած և նկարազարդած է ձեռագիր մը, գայթ մերիտ. Թանգարանում.— Հմմտ. Յիշատակարանք Ձեռագրաց, Անթիլիաս, էջ 1056:

10.— Աւետարան մը օրինակած և նկարազարդած է 1286ին, «ի ծեր հասակի», Յովհաննէս Արքայեղբոր պատուէրով.— Հմմտ. Հասկ Հայգ. Բ. էջ 59:

11.— Ժողովածուի մը օրինակութեան մասնակցած է Թորոս Գրչի և Արքայեղբայր Յովհաննէսի հետ: Այս վերջինը ձեռագրին Ստացողն ալ է.— Զեռ. Երևանի, Թիւ 3710:

12.— Գրած է ժողովածուի մը առաջին մասը, Թօտօրէի որդի Օշինի համար: Երկրորդ մասը գրած է Գրիգոր Երէց.— Զեռ. Երևանի, Թիւ 4086: Հմմտ. Հասկ Հայգ. Բ. էջ 59:

13.— Աւետարան մը, օրինակուած Վահրամ Գրչէն, 1293ին, Գոնեբի վանքը, սրբադրուած է Գրիգոր և Վահկացի Ստեփանոս քահանաներուն կողմէ.— Զեռ. Ս. Թ. Թ. 2612: Հմմտ. Հասկ Հայգ. Բ. էջ 59:

Ստեփանոս Վահկացին կր նկատուի հեղինակ նաև քանի մը երկերու, ինչպէս.

1.— Ճառ ներբողական Ս. Գր. Լուսաւորչի.— Հմմտ. Լ. Ս. Պաշտպան, Յիշտ. ԺԴ. Դարի, 1950, էջ 185: Զեռ. Երևանի, Թիւ 4086:

2.— Արարածոց Գիրք.— Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 616:

3.— «Երկասիրութիւն մի հմտական».— Սիսուան, էջ 536:

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ



## ՊԱՏՄԱԿԱՆ

ՈՒՐՈՒԱԳԹԵՐ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻՆ ԿԻՑ  
ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՔ ՍԻՒՆԵԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք անվարան կարող ենք հպարտութեամբ այստեղ ասել, որ բոլոր Հայ վանքերի մէջ կրթական նշանակութեամբ ամէնից բարձր տեղը պատկանում է Սիւնեաց վարդապետարանին:

Աւանդութիւնը և մանաւանդ քննական պատմութիւնը շատ խորին հրեշութիւն են ընծայում Սիւնեաց վարդապետարաններին և նրանց ծագումը հասցնում մինչև առաքելային ժամանակաշրջանը: Այդ վարդապետարաններից յատկանշական է Տաթևի դպրոցը: Այդ վանքը նոյնիսկ Տաթևում կամ Ս. Եւստաթէոս առաքելի ուխտն է, սակայն նրա նշանակութիւնը բարձրանում է այն ժամանակ, երբ Ներսէս Մեծ և Սահակ Պարթև շնորհեցին նրան արտօնութիւններ: Ե դարում Սիւնեաց Անանիա եպիսկոպոսը մի դպրոց հաստատեց այստեղ և Բենիամին անունով մէկին, որ Թարգմանիչների աշակերտներից էր, ուսուցիչ նշանակեց: Օրբելեանն ասում է, որ Սիւնեաց վարդապետարանը զոյրտուելի դարձան էր, որովհետև Ս. Սահակ և Ս. Մեսրոպ սրան էին տուել արտօնութիւն Ս. Գրիգոր Թարգմանիչու և մեկնելու: Ձ դարում այս վարդապետարանի գլխաւոր ղեկավարն էր Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսը, որ Մովսէս Քերթովազօր աշակերտն էր, քաջ հռետոր և անյաղթ փիլիսոփայ, քերթող և Թարգմանիչ: Նրա աշակերտներից էր իր յաջորդը՝ Մաթուսդա եպիսկոպոսը, որ ոչ միայն Սիւնեաց վարդապետարանի ծաղկեցրեց, այլև է դարում Հիմնեց Արշարունիքում Վարդիկ Հայ վանքը, որ կարճ ժամանակի ընթացքում համախմբեց իր ուղիղ բողոքական աշակերտներին: Մաթուսդա յին հռչակում են պատմիչների իրև Գեորգի Գեորգի, փիլիսոփայ, ամէն առաքինութիւններիով դարդարուած, քերթողութիւնն ուսած և ճարտասանականով վարժուած, փիլիսոփայական արուեստին հմտացած, ամենայն իմաստութեամբ լի և գիտութեամբ կատարեալ անձնաւորութիւն:

Եթէ եղել են Հայաստանում վանքեր, որոնց փառքը և անշքութիւնը կախուած է եղել պատահական հանդամանքներից, Սիւնեաց վարդապետարանը նրանց շարքին չէր պատկանում հին ժամանակ: Այստեղ մշտապէս լոյս էր տալիս գիտութեան ճրագը. «որ անձնաւորութիւններ կամ նոր հանդամանքներ միայն աւելացնում կամ պակասեցնում էին այդ լոյսի պայծառութիւնը, այլ երբեք չէին հանգցնում: Սիւնեաց վարդապետարանի այսպիսի յատկութիւնը և նրա ունեցած համարումը Հայերի մէջ մասամբ կարելի է պատկերացնել Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսի կեանքով. առ Հայոց նշանաւոր երգիչներից էր:

Գլխենք, որ նա իր սկզբնական կրթութիւնը ստացաւ Դուլինի կաթողիկոսարանում և ապա մտաւ Մաքենեայ վանքը: Պատմիչն ասում է. «Մի ժամի տարի յետոյ, երբ հասակն առաւ, անպատշաճ համարեց տգիտութեան խաւարի մէջ մընալ, այլ աշխատում էր գիտութիւն ձեռք բերել. ուստի անպարեց, դնաց դէպի գիտութեան աղբիւրը, այսինքն Սիւնեաց վարդապետարանը, որ բոլոր Հայ գիտունների գլխաւոր վայրն էր. ինչպէս որ Աթենացիք Յունաց և Հռոմէացիներէ մէջ ճոխացած էին և դիտութեան մայր էին կոչում, այնպէս էլ սրանք Հայաստանում: Ստեփաննոս աշակերտեց Սիւնեաց Մովսէս եպիսկոպոսին, այնտեղ հմտացաւ աստուածային դիտութիւններին և հրաման առնելով եպիսկոպոսից, նստեց րարունական ամպիոնը, ու մեկնում էր վարժարանի աշակերտների առաջ աստուածային գրքերը: Ստեփաննոս հետագայում իր ուսումը կատարելագործեց Պոլսում: Աթէնք էլ դնաց և այնտեղ ևս կատարելագործուեց գիտութիւնների մէջ. երբ վերադարձաւ Հայաստան, Սիւնեաց իշխանները նրան բնտրեցին իրենց առաջնորդ: Տաթևի առաջնորդների մէջ ոչ ոք այնպիսի արդիւնաւոր և համապատշաճ գործունէութիւն չի ունեցել, ինչպէս Ստեփաննոսը: Նա հմայք էր տուել իր գաւազանին, վարդապետական խօսքին և ուսումնական գրչին. պատմիչն անուանում է նրան ռուր հրեղէնի ի ձեռին ամենասուրբ հոգւոյն, և մեծ իմաստասէր, որ աստուածային օրինօք խրատէր և ուսուցանէր, որպէս սուր հատանէր զախտացեալսն, որպէս բժիշկ իմաստուն բրժշկէր զվիրաւորսն, որպէս աղ ընտիր համեմէր զանհամեալսն, որպէս արեգակըն պայծառ լուսաւորէր զխաւարեալսն»: Նա մեկնեց Ս. Գրգի զանազան մասերը, գրեց զանազան ճառեր, երգեց շարականներ և մեղեդիներ, որոնց եկեղեցական երաժշտութեան ձայները և այն: Ստեփաննոսի այս բազմակողմանի արդիւնաւոր գործունէութիւնն է, երևի, պատճառը, որ երբ նա մի անգամ կնոջ կատաղութեան զուգնելով 735 թուին յանկարծակի սպանուեց, ժողովուրդն իր զգացած արդանքը և բողոքը բնութեան երևոյթների մէջ դետեղեց. անմիջապէս նրա մահուան վրայ սուգ արին, անշուշտ, առերեքը: Հնաւար շուշափելի կալաւ զգաւաւն ամենայն 40 օր. ետայր երկիրն աւելոյ դողացմամբ, լեռինք տապալէին, վէժք է հիմանց քակտէին, աղբիւրք խցէին, գետք կորնչէին և ամենայն տեղի երերէր տատանմամբ: Մեծ վարդապետի մահից յետոյ Սիւնեաց վարդապետարանը դարձեալ յարառեց իր լուսաւորութեան առաքելգի մէջ և օրաւոր պայծառացաւ: Թ դարում Տաթևի առաջնորդներից մէկը՝ Յովհաննէս եպիսկոպոսը, որ լի էր աստուածեղէն շնորհիւ, հարուստ խոհակահաւն և փարթամ յիշողականաւն, նորոգում և ընդարձակում է այս վանքի շինութիւններն այն չափով, որ զգալի էր այն ժամանակուայ պահանջներին. «Զի անպատշաճ էր այնպիսի մեծի մայրաքաղաքի և աշխարհագումար ժողովարանի առանց մեծ կաթողիկէի լինել»։ Իշխանների և ժողովրդի օժանդակութեամբ Ս. Պետրոս և Ս. Պօղոս առաքելների յոյակապ եկեղեցու շէնքը շինելուց յետոյ, նրա օժման ճաշխարհախումբ հանդէսն էին կատարում, տեսիլք երևցաւ առաջնորդին: Ս. առաքելներից մէկը մի բանալի և միւսը՝ դիրք, տուեց նրան. և այսպէս աւանդեցին իրենց պատգամը. «Այլք բանալի արքայութեանն է. կացցէ յեկեղեցուջ, զի աստ բանալոց է դուռն դրախտին ամենայն մեղուցելոց. և այս գիրք կացցէ ի ամին, զի աստ բխելոց է շնորհ վարդապետական. և ողջամիտ ճարտգութիւն սուրբ գրեւիտաց աստ մնալոց է անապակ և անխառնուրդ»: Ինչ աւելի ճարտար վկայութիւն, թան այս աւանդութիւնը, որ դեղեցկօրէն պատկերացնում է մեր աչքի առաջ նախ՝ թէ Հայոց մէջ զարոցն ու եկեղեցին անշուտ են միմիանցից, և երկրորդ՝ թէ Տաթևու վարդապետարանն Հայաստանեայց Եկեղեցու ուղիղ վարդապետութեան առաջին և գլխաւոր ա-

ւանդապաւն է եղել․ անշուշտ, իր այդ վերջին նշանակութեամբ Հռչակաւոր վարդապետարանը շնորհապարտ է դիտութեանը կամ, տեսիլքի խոջով ասած, այն գրեթէ, որ առաքեալները գրին նրա մէջ: Եւ իրապէս, Միւնեաց երկրի պատմիչը բոլոր ժամանակների համար այս վարդապետարանի մասին հետևեալ բնորոշումն է տուել․ «Լի էր և ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր և վարժարանն դպրոցացն վարդապետական կրթութեամբ, նաև արուեստաւորք նկարչացն և գրողացն անհամեմատ»: Ժ դարում Տաթևի վանքը ունէր 500 միաբաններ: Եռվհաննէս եպիսկոպոսը կառուցել տուեց գրատուններ: ԺԳ դարում Տաթևի Հռչակաւոր առաջնորդներից մէկը՝ Ստեփաննոս Օրբելյան, իր երկրի պատմութիւնը գրելու ժամանակ մեծապէս օգտուեց այդ վանքի գրադարանի բազմահագար յիշատակարաններից, որոնք շտեմարանալ էին Տաթևում:

Միւնեաց դպրոցի և նրա ազդեցութիւնը կրող այլ դպրոցների պատմութիւնը շարադրելու համար շարունակում ենք Տաթևացու շրջանի պատմութիւնը: Մի նոր երևոյթ մեծ փառնդ էր պատրաստում Հայոց Եկեղեցուն․ պապական քարոզիչները, որ արգէն կարողացել էին խախտել Կիլիկիոյ Հայոց հաւատի հիմունքը, մի նոր միջոց գտան հերձուած ձգելու Հայոց վանական ուխտի մէջ. 1333 թուին Հռովմայ Աթոռն Հիմնեց Հայաստանի համար մի արքեպիսկոպոսական վիճակ, որի առաջին վիճակաւորն եղաւ Բարթուղիմէոս Բոննիացի յատին եպիսկոպոսը․ շուտով յաջողեցաւ նրան գրաւել դէպի իւր աթոռաւորդին, որ Արարկատականի Մարաղայ քաղաքի ժօռն էր, Հայ հետեոյներ, որոնց մէջ անդրանիկն եղաւ Քոնեցի Եռվհան վարդապետը․ սա այնքան յափշտակուեցաւ յատին եպիսկոպոսի քարոզութիւններով, որ բաժանուեցաւ Հայոց վանական ուխտից, ուրացաւ իր եկեղեցին և ապա պապի օրհնութեամբ մի նորանշան միաբանութիւն կազմեց՝ Ունիթոռներ կամ Միաբարներ անուանով, որոնք իրրի թէ Հռոմի եկեղեցուց բաժանուած Հայոց հօտը պէտք է վերադարձնէին նրա գիրկը: Միաբարների խումբն հետզհետէ աճեց նոր հետեոյներով, որոնց մէջ կային նաև երկու եպիսկոպոս՝ Ներսէս Պալիւնց և Սիմէոն Պեկ: Մոլորութիւնը տարածուեց ժողովրդի մէջ այն պատճառով, որ այդ ոչ-խարապեհատ գայլերը քարոզում էին Հայոց լեզուով, չէին մերժում Հայոց ծէսերն ու սովորութիւնները և աշխատում էին գրգռել Հայ ժողովրդի կրօնական ինքնասիրութիւնը, հերձուածող և մոլորեալ անուանելով, հեռաւոր օգնութեան սնտոի յոյսեր խոստանալով և իրր նոր երոպական լուսաւորութեան քարոզիչ ձևանալով: Գայթակղութիւնը մեծ էր և վտանգն յոյժ զգալի․ տեղը չէ պատկերացնել այն քառամեկի շարութիւնները, որ գործում էին կրօնի սրբութիւնը պահպանելու պատրուակով․ սակայն հարկ է յիշել, որ միամիտ ժողովրդի մի մասը, դաշխակեցուցիչ կրօնաւորների շնորհիւ միանգամ կորցնելով իր հաւատը, այլևս չկարողացաւ վերադառնալ դէպի իր նախկին հոգևոր երջանկութիւնը և հետութեամբ զոհ գնաց մահաեղանակութեան, մոռանալով միևնոյն ժամանակ և իր լեզուն: Հայոց վանքերն ու վանականները, այս խակ փառնոր տեսնելով, չկորցրին իրենց աշաւրջութիւնը․ փառնի առաջ միահամուռ համախմբուեցան ցրուեալ ուժերը, և եթէ չկարողացան ետ բերել ժողորանքներին, գէթ Զնացեալներին պատասպարեցին և զգուշացրին սպանանացող որոգայթից: Ունիթոռներին կենտրոնն եղաւ Երևնակայ Գունգալի վանքը, ուր ժողովուեցան նորադանդ Հայերը․ կարճ ժամանակի մէջ կազմուեցին և ուրիշ կենտրոններ, որոնք են Նախիջևան, Որմիա, Գարին և այլն․ Հայ ժողովուրդը և նրա առաջնորդները, այդ խմբի գործ դրած խարդախութիւններն ու խորամանկութիւնները աչքի առաջ ունենալով, անուանում էին նրանց Վաղթար-

մայ», որ նշանակում է աշխակաւ կամ կախարչ։ Դիմադրող ուժերն ունեցան նշանաւոր պարագլուխներ, որոնք իրենց վարդապետական հմտութիւններով կարծես մի նոր սերունդ պատրաստեցին վտանգի դէմ մաքառելու։ Նրանց մէջ առաջին տեղը բռնում են Եսայի Նչեցին, Յովհան Որոտնեցին՝ մականունակալ Կոստիկ և Գրիգոր Տաթևացին։ Վարդան վարդապետի աշակերտներից մէկը՝ Ներսէս Մէջու մօտն ուսում առաւ Եսայի Նչեցին, որ յետոյ Գայլեծորի առաջնորդն եղաւ։ Ղեռ ԺԴ դարի սկզբներում այդ վանքը լցուեց ուսումնասիրաւ կրօնաւորներով, որոնք ժողովուել էին Նչեցու վարդապետութիւնը լսելու։ Եսայիութիւնն ասում է, որ նրանց թիւը հասնում էր մինչև 360-ի։ այդ աշակերտներից մէկն էր և զայթակղութեան առաջնորդը՝ Յովհան Գոնեցին, որ իր վարդապետի հրամաններին անյուղ զտնուելով, բանադրուեց։ այն ժամանակ Եսայի ուղարկեց իր աշակերտներին քարոզելու և զգուշացնելու ժողովրդին։ Ինքն ևս մի կանոնական թուղթ դրեց Ատրպատականի առաջնորդին՝ Մատթէոսին, և բացատրելով Հայոց դաւանութիւնը, զանազան հրահանգներ տուեց նրան։ Նչեցու աշակերտների մէջ յետոյ նշանաւոր եղաւ Յովհան Որոտնեցին, որ ինչպէս Թովմա Մեծոփեցին ասում է, Վերբ արեւոյն փայլէր ընդ ումենայն աղզա Հայոց և լուսաւորէր զամենեան աստուածային գիտութեամբ և կայր ընդդէմ հերձուածողաց աղթարմայից»։ Որոտնեցին, որ հարուստ և աղուական տանից էր, հրաժարուեց աշխարհից իբրեւ մի ճշմարիտ կրօնաւոր և բոլոր իր կենքեր նուիրեց ուսման և քարոզութեան։ իր վարդապետի մահից յետոյ չուտով չըրկապատուեց Տաթևու վանքում բաղմամբ աշակերտներով, որոնց ուսուցանում էր նա Ս. Գրիգոր։ Նրա ժամանակ ծաղկեց Վանքի հովտում ճարտարաստա Ս. Աստուածածնի վանքը, ուր Սարգիս վարդապետի մօտ ժողովուած էին շատ կրօնաւորներ և լսում էին նրա վարդապետութիւնը։ Նրա մօտ պալիս էին և աղթարմաները։ փորձելու համար տալիս էին նրան զանազան հարցեր։ աշակերտները խնդրեցին նրան դաս տալ Առաքինութեան գրքի վրայ, որն Ունիթոսների գիտութեան շտեմարանն էր համարուած։ Սարգիս վարդապետը թէև ասաց իր դասը, բայց երբևէ չկարողացաւ գրահանել իր ունկնդիրներին, զի նրա աշակերտները լաւ չհասկացան ու ծածուկ գնացին վանքից և ուղեցին աղթարմայ դառնալ։ այն ժամանակ Սարգիս վարդապետն իր տկարութիւնն զգալով, օգնութեան կանչեց Յովհան Որոտնեցուն, որն իր աշակերտներով եկաւ Երնջակայ Ապրակունեաց վանքը, ժողովեց Սարգիս աշակերտներին և իր աղղու ճառերով սաստեց նրանց։ շատերը նրանցից զղջացին, ոմանք ծանր պատիժներ կրեցին՝ բանտ, շղթայ, գաւազան և այլն, իսկ մի քանիսը փախան, ինկան «Փռանկների աշխարհը»։

Մեծ հարուած տուեց Ունիթոսների առաջադիմութեանը և Որոտնեցու աշակերտը՝ Գրիգոր Տաթևացին։ այս հռչակաւոր վանականը, որ ժառանգել է ճեօթնալոյս վարդապետի անուն իբրեւ ճարտար լեզուի, տոկուն բնաւորութեան և հարուստ տեղեկութիւնների տէր անձ, ուսուցանում էր իր աշակերտներին, ամառուայ և ձմեռուայ համար յարմարեցրած քարոզներով լուսաւորում էր ժողովրդի միտքը, մերկացնում էր ամէնի առաջ Ունիթոսների որդաթիւները և վիճաբանութիւնների ժամանակ համոզանքով լուցնում էր հակառակորդներին։ Մեծոփեցին պատմում է, որ Տաթևացին ռուս միայն ծերութեան ժամանակ քարոզում էր անհատներին, այլ միշտ անաւհ և աներկիւղ նախաւում էր նրանց։ և ոչ ոք չէր համարձակուած ձեռք տալ նրան։ ո՛չ իշխան և ո՛չ նրա ստորադրեալը, զի ամէնքը հարստափում էին նրա պատկառելի երեսից»։

Այս վարդապետներն ունեցան և այնպիսի ընկերներ և աշակերտներ, որոնք շատ տեղերում նորոգեցին և ծաղկեցրին վանքեր։ Գրիգոր Տաթևացու

աշակերտներից յայտնի են Տաթևի առաջնորդ և բանաստեղծ Առաքել Բաղդև-  
ցին և Ժեղարու պատմիչ Թովմա Մեծոփեցին. Սարգիս վարդապետի աշա-  
կերտներից երևելի եղան Գրիգոր Ծերենց՝ Արծկէի Յիպնայ վանքում և Վար-  
դան վարդապետ, որ առաջ Հոգեաց և յետոյ Սուխարու Ս. Աստուածածնի վան-  
քում ունեցաւ շատ աշակերտներ, Նշանաւոր եղան նաև Սաղմոսափանք, Հա-  
ւուցթաւ, Սևան, Աստապատու Ս. Նախավկայ, Մեծոփայ վանք և այլն: Ժեղ-  
արի բոլոր այս վանքերի և վանականների մի բարոյական մեծ ծառայութիւնն  
էլ այն եղաւ, որ Հայոց Հայրապետական Աթոռն ադատեցին անկումից և մտքե-  
րը նախապատրաստելով, պատճառ եղան 1441 թուին Հայրապետական Աթոռի  
փոխադրութեանը Սոխի գէպի իր նախկին տեղը՝ Վաղարշապատու Ս. Էջմիա-  
ծինը:

Արարական տիրապետութեան շրջանում և նրա անկման նախօրէին Հա-  
յաստանում Հիմնադրուեցին երեք աւատատիրական Թագաւորութիւններ՝ Բագ-  
րատունեաց, Արծրունեաց և Սիւնեաց, և այդ Թագաւորութիւնները կառուեցե-  
ցին վանքեր: Այսպէս, Բագրատունիները իրենց Հովանաւորութեան տակ էին  
վերցրել Հաղբատի, Սանահինի, Հոռոմոսի, Բաղարանի, Մրենի, Տեկորի, Ե-  
րազլաւորի և այլ բազմաթիւ վանքեր: Նրանց Թագաւորութեան ժամանակ  
Հիմնուեցին և նորոգուեցին այլև ուրիշ նշանաւոր վանքեր: Վահրամ Պաշա-  
պուրի Հիմնադրեց Մարմաշենի վանքը: Գրիգոր Մաղխատրոսը նորոգեց Հա-  
ւուցթաւը, Կեյարիսի, Բլնիի և այլ վանքեր: Վեստ Սարգիսի Հովանաւորու-  
թեան տակ էր Խծկունքի վանքը: Սիւնեաց իշխանների բարեպաշտութեան ար-  
դասիքն են Սևանայ Հովտի, Վայոց ձորի, Երնջակի մենաստանները, որոնց  
մէջ, ինչպէս տեսնաք, փայլում էր Մաքենեաց վանքը: Արծրունի Թագաւորնե-  
րը ծաղկեցրին Վանայ Ծովի կղզիները, որոնց մէջ երևելի են Նարեկայ Ս.  
Ուխտը և Աղթամարը: Անիի Թագաւորները և Հայոց կաթողիկոսները վերանո-  
րոգեցին և բարգաւաճեցրին Արշարունեաց կամրաձորի վանքը, Հոռոմոսը:  
Նորահաստատ կամ վերանորոգուած վանքերը Հանդիսացան պատասպարանք Ս.  
Գրգի ուսումնասիրութեան, և մանուկների դաստիարակութեան կրթական օ-  
ճախներ: Այսպէս, մենք գիտենք, որ Ժղարում ծաղկեց Ռշտիկեում Նարե-  
կայ մեծափառ և բարձրապատիւ ուխտը, որի առաջնորդն էր մտափարժ փիլի-  
սոփայ Անանիա Նարեկացին, նրա աշակերտ Ռիտանես պատմիչը, որ գրեց  
Հայոց պատմութիւնը, տալով մեզ մանրամասն տեղեկութիւններ Հայերի և  
Վրացիների բաժանման մասին: Այս պատմիչը իր ուսուցչին անուանում է Վր-  
սեմական ի Հարս և տիեզերական վարդապետ՝ կենդանախարուէկեալ սուրբ և  
պարկեշտ փարուք, Հոգեւոր հեղինակ և Հռչակաւոր Հռետոր». նոյն պատմիչը  
հաղորդում է, որ Անանիա Նարեկացին գալով Խաչիկ Ա. կաթողիկոսի մօտ, նը-  
րան ընծայեց զգգիրս հաւատարմատ, որ ընդգէմ երկաբնակացն». իբրեւ թշա-  
ռից գանձանք աղանդների և հերձուածների, Անանիան գրով և խօսքով մաքա-  
ռեց նաև Թոնդրակեցիներին և այլ աղանդաւորների գէմ: Նրա աշակերտներից է  
Նարեկայ վանից վանականն աքանչելի բանաստեղծ Ս. Գրիգոր Նարեկացին,  
որ իր բազմաբովանդակ աղօթքների մէջ օրտի խորքերից խօսելով Աստծոյ  
հետ, մեծ հմտութեամբ պատկերացնում է Ամենակալի մեծութիւնը և մարգու-  
ռչնչութիւնը: Չնայելով իր բազմաթիւ երկատիրութիւններին և մտաւոր հոյա-  
կապ զարգացմանը, Նարեկացին համեստութեամբ անուանում է իրեն «յետին  
բանահիւսաց և կրտսեր վարժապետաց»:

ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐԵԱՆ

(Շաբ. 2)

## ԳԻՏԱԿԱՆ

### ՀՈՅԱՄՈՂԷԶՆԵՐՈՒ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՄԱՅԸ <sup>(1)</sup>

Հարիւր երեսունը վեց միլիոն տարիներ առաջ, դարնան մայրամուտի մը, փոքրիկ, մուշտակաւոր կենդանի մը, զգուշութեամբ կը դիտէր ցած եղջերուտի մը ընդմէջէն՝ երկարաձողւած արեւագարձային ծովայինճի մը եղբին՝ որ հետագային, մեծ մասով պիտի դառնար Քոլորադոյի նահանգը։ Փոքրիկ արարածը մեծ ուշադրութեամբ կը նայէր ջուրերուն, խորքէն բանի մը դուրս ելելուն կը սպասէր կարծես, սակայն ոչինչ կ'երևար։

Փոքրիկ այս կենդանին համածնող<sup>2</sup> մըն էր. մին նախածնունդ ստնաւորներէն, ինչպէս նաև նախահայրը հետագայ տիպարներուն։ Յանկարծ մուշտակաւորը նայուածքը սեւեռեց կէտի մը ու գտաւ փնտռածը։

Իրմէն իննսուն ոտք հետու, պզտիկ գունդ մը կ'երևար ջուրին վրայ, որ դիտող կենդանիէն հազիւ մեծ էր, շուրջ վեց ոտք արամապծով։ Կարծես թէ կը ծփար, առանց բանի մը կապուած ըլլալու։ Իրականին մէջ, սակայն, գունդը անսովոր քիթն էր կենդանիի մը որուն ունեղեբը գլխուն վրայ կը գտնուէին։ Կենդանին կը հանդատանար ծովայինճին մէջ, շնչելով այս հնարամիտ ձեւով։

Ծփացող գունդը դանդաղօրէն վեր կ'ելլէր ջուրերէն։ Երկար, շնորհալի վիզի մը ծայրին կցուած և միացած գլխու մը՝ ահ շարունակ կը բարձրանար կամարածէ, ի վերջոյ կանգ առնելու 25 ոտք ջուրէն վեր։ Կարծես թէ գնդակ մըն էր անհաստատ պարանի մը ծայրին անհունօրէն վեր նետուած։ Բանի մը կապուած ըլլալը չէր երևար և երբ վիզը ջուրէն բոլորովին դուրս ելաւ, գլուխը դառնալ սկսաւ այս ու այն կողմ, քնքուշ շարժումներով և հետագոտական նպատակներով։ Յոյունք քիթին երկու կողմերը գտնուող մանր աչքերը ա՛մէն կողմ գննելէ և իրենց տեսածէն ապահով ըլլալէ վերջ՝ կենդանին նոր շարժումի մը սկսաւ։

Վիթխարի դանդաղութեամբ քիչ քիչ գուրս կ'ելլէր լիճէն, ցեխոտ ջուրերը վար կը թափէին անոք վրայէն՝ ամէն անգամ մատ մը բարձրանալուն։ Շուտով

<sup>1</sup> Յօդուածը ամիսի թարգմանութիւնն է շէյմզ Միչնըրի Քոլորադոյի նահանգի պատմութեան նուիրած «Հարիւրամեակ» գիրքին, հոյամոզէցնելու դարաշրջանի մասէն քաղուած։

Հոյամոզէցնելու դարաշրջանը բուն անունով ծանօթ է Մեծ Սոդոմ ներս Դարաշրջան։ այս վիթխարի սոդոմները առաջին անգամ երկրի վրայ Միչին Կեմքի սկիզբը — 220-70 միլիոն տարիներ առաջ — և անհետացան երկրէն մոյմ ժամանակաշրջանի վերջերը։ Իշխեցին 135 միլիոն տարիներ և յանկարծ անբեկութեամբ՝ ամբողջական չ'աքայտու։ Այս մտօնն ու ամենց կեանքին, բնախօսական կազմութեան, անոնց այնքան հետաքրքրական տեսակներուն և կայսրութեան մասին պիտի անդրադառնանք երկրորդ յօդուածով մը։

<sup>2</sup> Գիտական քաղը՝ *Panthere* — ամառաբնութիւն մախածնող, բոլոր ստնալորներու կամ համաստնալորներու ծնողը, որմէ՝ «համածնող» քաղը։

ծովալիճի մէջի բանը յայտնի եղաւ. անկէ դուրս ելաւ թխամարմին, հրէշային կոյտ մը, որուն կցուած էր այդ ճկուն վիզը: Ջանդուածեղ մարմինը այժմ կը յառաջանար դանդաղօրէն ու կշռութաւոր, մինչ՝ մուշտակաւորը եզերքը կեցած զայն կը դիտէր:

Այնպէս կը թուէր թէ սողունը կը լողար, իրականին մէջ սակայն ան կը քալէր յատակին վրայ, ջրածածուկ խոշոր սրունքներով: Անցնելով ծանծաղ ջուրը երբ մօտեցաւ եզերքին, այն ատեն, պարզուեցաւ վայելչութեան և դիզեցկութեան տպաւորիչ տեսարան մը: Հսկայ պոչ մը, վիզէն աւելի երկար, աւելի նուրբ գիծերով յարդարուած, դուրս ելաւ ջուրէն կենդանիին ետէն քաշկոտուելով և ճօճուելով ծովալիճի մակերեսին: Գլխէն մինչև պոչին ծալրը՝ պահանք 87 ոտք երկարութիւն ունէր:

Մինչև հիմա երկար օձի մը նմանող սողունը երբ եզերք ելաւ, տեսնուեցան զինք վեր բռնող զանգուածային իւր չորս սրունքները, որոնք ամրակառոյց վիթխարի սիւններու կը նմանէին: Անոնք իրանին միացած էին ոսկրազօդերով և այնպիսի կոյտ կառուցուածք մը ունէին, որ, հակառակ կենդանին երկակենցաղ ըլլալուն, կարծես ինքզինքը պիտի չկարենար դիւրութեամբ ոտքի կենցիկ ցածաքի վրայ, ուր ջուր չկար զինք վեր մղելու:

Դանդաղ ու ծանր քայլերով սողունը կ'երթար դէպի վճիտ գետ մը՝ մօրուտին մէջ թափող. հիմա իր ընդհանուր կազմութիւնը մէջտեղ էր. գետնէն մինչև գլուխը 35 ոտք էր, ուսերը 13 ոտք բարձր, պոչը երկարած՝ 50 ոտքի չափ, կը կշռէր 30 թոն մօտաւորապէս:

Գերանամողէզն էր, հոյամողէզներուն ոչ ամենէն մեծը և ոչ ալ ամենէն սարսափաղդուն: Ոնգրոյ առարկայ տիպարը էջ մըն էր, 70 տարեկան՝ դեռ ծաղիկ հասակին մէջ: Ան կ'ապրէր միայն բուսականութեամբ որ կը գտնուէր ճախնուտ ջուրերուն մէջ: Այս նպատակով ամէն կողմ պտտցնելով իր պղտիկ պուխր՝ կը ծայրատէր ինչքան որ ճարակ կրնար գտնել. ասիկա իրեն համար գիւրին գործ չէր, որովհետև վերջին ծայր պղտիկ բերան մը ունէր, մտնալու դամ և ցցուն առաջամասի ակոսներով. ծամելու համար աղօրիք չունէր: Այդ հարցն էր որ զինք դէպի լիճեզրը բերած էր, իր առաջին գործը եղաւ ծամելու գործով զբաղել:

Ծարակելէ ետք մօտը գտնուող բոլոր բոյսերը, զնայ ջրանցքը՝ ծովալիճէն հեռու. երկչոտ դիտարդը շատ մօտհոգ էր անոր անցքէն, անոր խոշոր ոտքը կրնար քանդել իր բոյնը, ինչպէս ուրիշ հոյամողէզ մը ըրած էր: Գերանամողէզը քալած միջոցին ամենէն ուրիշն արարածներէն մէկն էր մինչև հիմա երկրի վրայ տեսնուած: Մեծ զգուշութեամբ, առանց աճապարանքի ու առնուազն երկու ոտքերը միշտ ամուր կերպով տեղաւորելով գետին՝ ան կը յառաջանար կեանք առած լերան մը պէս: Գլուխը գետին յասակը իջեցուցած որոշ քար մը կը փնտէր: Երբեմն կանգ կ'առնէր, գուշ քիթովը քար մը կը չըջէր քայլէ հաւնք. ծայրերը շատ սուր կ'ըլլային:

Իր ապարդիւն փնտռուէրը զայրացուց զինք ու չնչմարեց ցածաք ապրող ու երկու ոտքի վրայ քալող հոյամողէզի՝ մը իրեն մօտենալը: Թէև մե-

3 *Diplodocus* — Յուլիան Բրիտիս Բաքերի կազմուած որ կը նշանակէ double beam— կրկնակ գերամ, գոյգ գերամ — երկու գերամ օւնեցող մոզէգ. երկագերամ մոզէգ, գոյգ գերամ մոզէգ, երկաթեծամ մոզէգ. կարճ ձևով՝ գնրամամոզէգ:

4 Հոյամոզէգները կ'ապրէին մինչև 200 տարի:

5 Հոյամոզէգներու 250 տեսակ ծանօթ է այսօր աւելի քան 10 տեսակներ

ծուծեամբ չէր բաղդատուեր գերանամողէղին հետ սակայն աւելի արտաշաւած էր, խոշոր դլուխ մը ունէր, լայն երախ եւ ահարկու ու սրածայր տկոտներ: Մասկեր մըն էր, բաւականաչափ խոշոր չէր չափուելու համար գերանամողէղի պէս հակայ կենդանիի մը հետ եթէ ան իր սեփական միջնափայրք՝ Զուրին մէջն էր, բայց միշտ դարպասելու վրայ էր Զուրր ապրող հակայ հոյամողէղիներ, եթէ տնոնք յանդգնէին չափէն աւելի մօտենալու ցամաքին:

Ան կողմնակի մօտեցաւ գերանամողէղին, մեծ զոռչութեամբ ու առջևի երկու ոտքերը պատրաստ՝ ձեռքերու պէս, ճանկելու համար դայն: Միշտ կը զոռչանար անոր պոչէն, որովհետեւ անոր միակ դէնքը ալ պէ էր:

Բուսակները յարձակողէն անտեղեակ էր եւ կը շարունակէր զննել զետին յատակը՝ յարժար քարին համար: Մասկերը անոր վար ծոած զլուխը տկարու թիւն նշան մը համարելով խոյացաւ դէպի այն կէտը ուր անոր խոցելի վիզը կը միանար իրանին, գիտնալով որ ուրիշ ոչ մէկ կերպով զայն կրնար զգևորել: Գերանամողէղը երբ տեսաւ անոր դէպի իրեն գալը, չըջեց ինքզինքը ճարպիկութեամբ և յարձակողը դիմաւորեց իր մարմնին կոշտ ու զօրաւոր կողմով: Այս դիրքաւորումը ետ մղեց մասկերը եւ ան սայթաքեցաւ: Այս տեսնելով գերանամողէղը յառաջացաւ, կամաց մը պրկեց պոչը՝ զօրեղ աղեղի մը պէս ու հարուածեց զայն այնպիսի ուժգնութեամբ մը որ հոյամողէղը փախչախուտած, թաւալղոր ննտուեցաւ մացառուտ:

Առջևի պղտիկ ոտքերէն մին կոտրած էր հարուածէն. կոկորդին խորէն «առք, առք» ձայներ հանելով, հեռացաւ քաշկոտուելով: Գերանամողէղը վերսկսաւ իր փնտտութիւնը:

### ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՇԱԼԻԽՐԸ

Գերանամողէղը, վերջապէս, գտաւ իր ուզածը: Ծուրջ մէկուկէս քիօ կշռող քար մըն էր, տափակցած ծայրերով, ողորկ ու կորցած: Երկու անգամ մշտեց զայն ցոռկով: Գոհ էր, կը յարժարէր նպատակին. յետոյ բերանը առաւ, դլուխը կրցածին չափ վեր բարձրացուցած, կլից քարը և ճաշեցուց զայն երկար վիզէն վար, խռչափողին մէջ, ուր ան միացաւ վեց ուրիշ աւելի մանր քարերու, որոնք անդադար իրարու կը քսուէին երբ կենդանին շարժէր: Ահա թէ ինչպէս ան ծամեց իր ճարակը: Եօթը քարերը կը ծառայէին աղօթքներուն տեղ, որոնցմէ զուրկ էր:

Մութը սկսած էր, պէտք էր ապաւինիլ ծովալիճի պաշտպանութեան, ապաստանելու իր տեղը, ուր 14 ուրիշ գողուններ կը կազմէին պաշտպանողական երամակ մը: Սակայն շարունակեց մնալ գետին մէջ, անորոշ ցանկութեամբ մը, զոր չէր կրնար ընտրուել յատկօրէն և նման գերանամողէղի րնտանիքին ըլլոր անդամներուն՝ չափէն աւելի պզտիկ և անզոնադանոց իր ուղեղը իրեն թոյլ չէր տար տրամաբանելու կամ յիշելու: Բնութաբանութեան իր ունակութիւնն էր որ կը զգուշացնէր զինքնախտերէն: Այսինքն, մասնաշաղկապ հասկացողութեամբ բացատրելու համար — խոտիայոյց տապանապը կամ կրճող խոտիքը զոր հիմա ան կը զղար և որ զլիաւոր զրդապատճառն էր եղած երամակի պաշտպանութենէն՝ հեռանալուն — իր պղտիկ ուղեղը օղնութիւն չէր կրնար տալ:

կը գտնուին: Կարգ մը հոյամողէղներ հաւու մեծութիւն ունէին. մեծերէն ուսմա կը կշռէին 50 քամ և ունէին 30 մեքք երկարութիւն: Զորս յարկանի շէնքի մը տանիքը դրուած թաղաքին բոյսերը կրնային դիւրութեամբ Թարակել:

Այժմ կ'երթար գէպի կրարարժուեց մը, որ առաջուրնէ իրեն ծանօթ էր. ծովալիճէն հեռու և ստորոտէն անցնող գետէն 60 մետր բարձր: Հոս, հակահոսանքները մօրուտ մը կազմեր էին և երբ ան մօտեցաւ այս պաշտպանուած վայրը՝ ապահովութեան զգացումով մը լիցունցաւ: Զգացածէն անորժեւով, հանդարտօրէն փոխուեցաւ մութ քաւորունկ ջուրներուն մէջ. գլխուն ծայրի դունդը դուրս ձգեց ջուրէն՝ շնչելու համար:

Քունը չտարաւ. պէտք էր քնացած ըլլար՝ ըստ սովորութեան: Կրծող անյապաւթիները արթուն պահեց զինք, տարտամօրէն դեռ փնտռելով բան մը, զոր ոչ կրնար սահմանել, ո՛չ ալ կրնար հաստատել: Քանի մը ժամ վերջ, ան վերադարձաւ գլխաւոր ջրանցքը և հոն անցնեց արևադարձային երկար գիշերը:

Գերանամողէղը առակ էր մեծ ճկունութեամբ գործելու, ինչպէս ցոյց տուաւ առիկա երեք շարժառիթներով: Մօրուտը տեղ մըն էր ուր կենդանիներու մեծ մասին համար մահ կը նշանակէր, ան կրնար ինքզինք միշտ ազատել զօռաբուծութենէ, որովհետեւ իր զանգուածեղ ոտքերը հետաքրքրական յատկութիւն մը ունէին: Տիղմին մէջ կոխած առանձնեղ քանի մը բթաչափ խորունկ փոս մը կը բանային, սակայն փակող ցեխէն զանոնք դուրս քաշելու առանձնաւոր կրնային տալ առաջամասի սրունքներու լայնքին: Ուստի, գերանամողէղին համար, իր վիթխարի սրունքը և ոտքը ցեխէն քաշելու այնքան պարզ էր որքան մօրուտի եղբրէի տիղմէն ծիւ մը քաշելը. ցեխին համար բան մը չկար կառնելու և սրունքը անարգել կը քաշուէր սուի՛չ ծայնով մը:

Գերանամողէղ — զոյգ գերաններ — այսպէս անուանուեցաւ, որովհետեւ պոչոցնակրին 16ը (թիւ 12էն մինչև 27 գիտներուն ետեւը) կաղմուած էին զոյգ կողմերով՝ պաշտպանելու համար մեծ շնչերակը որ կ'անցնէր պոչին վարի կողմէն: Սակայն ուղեակիրը ուրիշ անցք ալ ունէր վերի կողմէն և ան գլխուն խարխիւէն անցնելով, կ'երթար պոչին ամենէն զօրաւոր մասին: Այս անցքին մէջ կար զօրաւոր հաստ ջիղ մը որ շատ ապահով հաստատուած էր ուսէն՝ զիստին և որ կրնար կենդանին շարժումի մղել երկու կողմէն: Այսպէս, երկար վիզը և քուռող պոչը յար և նման էին գլխունը քաղցրացիւններուն մեքենական այն սկզբունքին, որով հետապաշտ զարաշրջաններուն մարդիկ կրնային վերցնել յափաղանց ծանր առարկաները ճախարակի մը վրայ՝ ճարտարութեամբ պարան մը սահեցնելով և այսպէս հակակշռելով ամբողջը:

Գերանամողէղին կողմէ գործածուած ճախարակը ողնոսկրին զոյգ կողմերով շինուած անցքն էր. իր պարանը վիզին և պոչին ուժեղ շիղջն էր. իրանի զանգուածին հակակշիռ պահողը: Եւ այս բոլորը կը գործէր հրաշալի պարզութեամբ: Առանց ճախարակի և պարանի այս գերակայ դրութեան, գերանամողէղը պիտի չկարենար շարժման գնել ոչ վիզը և ոչ ալ պոչը: Ան կատարելագործուած մեքենայ մըն էր. նոյնը պիտի ըլլար իր կեանքի ձևին յարմարած որեւէ կենդանի որ պիտի յաջողէր իրեն՝ գալիք սերունդներէն:

Իր ունեցած երրորդ առաւելութիւնը զարմանալի էր: Սրունքներուն ուժեղ ոսկորները, որոնք ջուրին մէջն էին ժամանակին մեծ մասը, զինք անհրաժեշտ կայունութեամբ պայմանաւորող, ամենէն ծանր կառուցուածքն էին: Բայց այն ոսկորները որոնք իր մարմնին վերի մասին մէջ կը գտնուէին, յաջողաբար, աւելի թեթեւ զանդուած շինուած էին, ոչ միայն իբրև զուտ ծանրութիւն այլ նաև իբրև գործնական կազմութիւն, և այս նուրբ կառուցուածքը իր մարմինը կը վերագէր, կը թողուր որ գրեթէ ծփար:

Այդ չէք բոլորը: Բազմաթիւ բացուածքներ — պատուհաններու պէս բաց անցքեր — հեռու կը պահէին ողնոսկրը՝ վիզէն և պոչէն, այս ձևով կը նշագէր անոնց ծանրութիւնը: Այս բարդ ոսկորները, վերէն ու վարէն իրենց



# Ս. ՅԱԿՈԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

\* Ծշ. 1 Ապրիլ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ իր անդրանիկ քարոզը խօսեցաւ Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան, «Տէր, քաւեա զիս զմեղատրս» խօսքը ունենալով իբրև բնաբան: Անդրադարձաւ Փարիսեցիի և Մաքսատրի առակին և բացատրեց կերպերը որով քրիստոնէան կրնայ անկեղծ զոյցումի և ապաշխարութեան ոգիով մաքրուիլ իր մեղքերէն: Ապա, Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գարիկեան խօսեցաւ այն ահաւոր աղէտին մասին, որուն Լիբանանի Ռետ ենթադրուած է Լիբանանահայ Ռոժ համայնքը մօտ տարիէ մը ի վեր, և կոչ ըրաւ ներկաներուն որ իրենց արտաքուիս լուսաներով օգնութեան ձեռք կարկանդակ իրենց կարօտեալ ազգակիցներուն:

\* Ուր. 2 Ապրիլ.— Վաղուան 40 մանկանց տօնին առիթով, երեկոյեան Ս. Հրեշտակապետաց նկեղնցիին մէջ կատարուեցաւ մասնաւոր Հսկման արարողութիւն, որուն ընթացքին քարոզեց նոյն վանքի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան, բացատրելով պարագաները Սեբաստիոյ քառասուն մանկանց նահատակութեան և բնաբան ունենալով «Մի՛ զարհուրիք լայնցանէ որք սպանանեն զմարմինն»: Ժողովուրդը իր բարեպաշտական զգացումները արտայայտեց ձեռք նուիրելով և մոմ վառելով սրբոց նկարին դիմաց:

անցքերովը այնպիսի նրբութեամբ ճարտարապետուած էին, որ կրնային համեմատուիլ միայն կոթակաւ տաճարի մը կամարներուն և պատուհաններուն հետ: Ոսկոր գործածուած էր միայն հոն ուր ճշուամբ չէզոքացնել կր պահանջուէր:

Ճարտարապետական այս հրաշալիքն էր, այս անսահմանօրէն կատարելագործուած մեքենան, որ վերջերս միայն Ֆիզիքական զարգացման բարձր աստիճանի հասած էր և որ պիտի բարգաւաճէր 70 միլիոն տարիներ ևս: Այդ էր որ կը ծփար այն գիշեր՝ ծովալիճի եզերքին, և երբ արշալոյսին, փոքրիկ ստնաւորը դուրս ելաւ իր թոյնէն՝ տեսաւ զինքը, որ իր վիզը կը զարձնէր ծովալիճէն դուրս, յետոյ գէպի կրաբարձունք ցամաք ելլելու համար:

ՃԷՅՄՁ ՄԻՁՆԸՐ

Թրգմ. ՀՐԱՆԴ ՆԱԳԱՇԵԱՆ

\* Ծր. 3 Ապրիլ.— Ս. Քառասուն Մանկանց Ահաւորոյ: Ս. Պատարագ մատուցուցաւ Ս. Գլխադրի մատուոն մէջ: Ժամարարն էր Հոգը. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան: Վերաբերումը կատարուեցաւ 40 Մանկանց նկարին առջև շինուած շարժական սեղանին վրայէն, որուն դիմաց, կաթսայի մը մէջ կը պլլալային 40 գոյնզգոյն կանթեղներ:

— Կէսօրէ ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Պատանատեղիի, Ս. Գերեզմանի և Գիտ Խաչի այրի ուխտերէն ետք՝ վերջինին կից՝ 11. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ տնօրինական սրբատեղիներու այգելութեան հանդիսատր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգը. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան:

\* Կիր. 4 Ապրիլ.— Դատաւորին: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Լուսաւորիչ: Ապա, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը հանդիսատր Ս. Պատարագ մատուց Բրիտանի Ս. Գերեզմանին վրա և նախագահեց նոյնին և Պատանատեղիին շուրջ կատարուած երապարած մեծահանդես թափօրին, որ վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ:

\* Գշ. 6 Ապրիլ.— Իրիկուան, Ս. Հրեշտակապետաց եկեղեցիի Հսկումին քարոզեց Հոգը. Տ. Գեղարդ Աթղ. Տաւուտլարեան, «Ապաքէն դուք Տաճար Աստուծո՛ւ էք» Պօղոս Առաքելի խօսքը ունենալով իբրև բնաբան:

\* Ծշ. 8 Ապրիլ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգը. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիկեան:

\* Ուր. 9 Ապրիլ.— Ս. Գրիգոր Լուսաւորիչի վերապամուտի նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

\* Ծր. 10 Ապրիլ.— Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորիչին: Յիշատակ Չարչարանաց և մտանելոյն ի վիրապն: Առաւօտեան ժամերգութեան աւարտին, ըստ սովորութեան, Ս. Լուսաւորիչի մասունքը իր հանգստարանէն թափօրով փոխադրուեցաւ Առաջ Սեղան, ձեռամբ Հոգը. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիկեանի: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ աւանդատան Ս. Լուսաւորիչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգը. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան:

— Կէսօրէ ետք, Հոգը. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատուոն մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ:

— Գիշերակիզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան Եկեւցէի և Հսկման արարողութիւններ, և ապա գիշերային ու առաւօտեան ժամերգութիւններ: Մատուցուեցաւ նաև Ս. Պատարագ՝ Համբարձման մատուոն մէջ: Ժամարարն էր սրբավայրին Տեսուչը՝ Հոգը. Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

\* Կիր. 11 Ապրիլ.— Գալատեան, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպ. Աստանեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատուոն մէջ եպիսկոպոսական խորոյ ի գլուխ պատարագեց Հոգը. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիկեան:

\* Գշ. 13 Ապրիլ.— Իրիկուան վերջին Հսկումին ի Ս. Հրեշտակապետ քարոզիչ Հոգը. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան, բնաբան ունենալով՝ «Հայր, ուսո՛ւ մեզ կալ լաոթօս» և մեկնաբանելով Տէրունական Աղօթքի առաջին նախադասութիւնը:

\* Ծշ. 15 Ապրիլ.— Իրիկունք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտու-

ւեցաւ Մեծ Պահոց Եկեացէի վերջին ժամերգութիւնը, որուն ընթացքին քարոզեց Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան, «Արծաթսիրտութիւն՝ մայր ամենայն յարեաց» բնաբանով:

— \* Որ. 16 Ապրիլ. — Խ. օր Մեծ Պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Արեւագալ»ի վերջին ժամերգութիւնը, իսկ կէսօրէ ետք՝ վերջին «Խաղաղական» ժամերգութիւնը:

\* Շբ. 17 Ապրիլ. — Յիշատակ յարութեան Ղազարո: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան: Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի աշակերտութիւնը Ս. Հաղորդութիւն տաացաւ:

— Կէսօրէ ետք, վաղուան Ծաղկազարդի տօնին առիթով, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ մեր վերնատան մատուոյն մէջ: Ապա կատարուեցաւ տնօրինական արքատեղիներու այցելութեան հանդիսատր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Մանուէլեան:

\* Կիր. 18 Ապրիլ. — Ծաղկազարդ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտյարեան: Ապա կատարուեցաւ մեծահանդէս թափօր՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանաւտեղիին շուրջ, և «Անդաստան»: Թափօրը կը գլխաւորէր Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան: Մեր թափօրին կը հետևէին Ղալոյիներու և Ասորիներու թափօրները: Ժամը 1ին, արարողութիւններու աւարտին, Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք, և «Որ զիդրհորդ քո գաւտեան» շարականի երգեցողութեամբ խոսաօճանալով Հայոց Թաղի մուտքէն բարձրացաւ Պատրիարքարան:

— Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան», նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապրանեանի: Ժամերգութեան աւարտին Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան կարդաց անուանացանկը «Բողոքն սիրով և փափաքով» վարագոյր քացոյ հաւատացեալներուն: Դոմբացէքի սրտագրաւ արարողութեան նախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան: Կատարուեցաւ հանգանակութիւն՝ Ագուճիէ Ազգ. Բուժարանին ի նպաստ:

\* Գշ. 20 Ապրիլ. — Աւագ Երեքշաբթի (Յիշատակ տաւն կուսանազ) և Աւետումն Ս. Աստուածածնի: Ս. Կոյսի Աւետման տօնը լետածգուած ըլլալով, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի արեւելա՝ողմը գրտնուող Ս. Յովհաննէս Աւետարանիչի մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Ապա կատարուեցաւ տնօրինական արքատեղիներու այցելութեան թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան, որ թափօրի իւրաքանչիւր հանգրտանին սակաւաթիւ ուսուսողներուն տուաւ հարկ եղած քացատրութիւնները:

\* Եշ. 22 Ապրիլ. — Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթրեաց Տեառն): Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարողաց»: Ապա, կարճ դադարէ մը ետք, հանդիսատր Ս. Պատարագ մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան, որ կարդաց Ս. Բարսեղ Հայրապետի ճառը: Բաւական ծողովորդ մօտեցաւ հաղորդուելու:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Ունայտայ»ի հոգե-

գրաւ արարողութիւնը, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր, և ի ներկայութեան օտար հրաւիրեալներու և պետական ղեմքերու: Ուղքերու լուսցումէն ետք, Անկիլիքան Արքեպիսկոպոսը զգեստաւորուած Ասագ Սեղան բարձրանալով կարդաց Ս. Աւետարանէն Ոսնալուալի վերաբերեալ համարները:

— Ժամը 5ին, փոքր թափօր մը, Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պաքսմեանի գլխաւորութեամբ, այցելեց զոյգ քանտերը Քրիստոսի —Ս. Հրեշտակապետաց եկեղեցին և Ս. Փրկչի վանքը: Առաջինին մէջ կատարուած կարճ արարողութենէ մը ետք թափօրը խմբուեցաւ եկեղեցիի զաւթին մէջ գտնուած Ս. Զիթեանի ծառին դիմաց, որուն վրայ մեր Տէրը կապեցին դատաւարութենէ առաջ: Զոյգ արքայալայերուն մէջ Հոգշ. Հայրստորքը խօսեցաւ, պահին խորհորդէն թաղարուած, տալով նաև պատմականը զոյգ արքայալայերուն:

— Ժամը 7ին, Մայր Տաճարին մէջ սկսաւ «Խաւարման Կարգ»ը տխրագղեցիկ խորհրդատրութեամբ, որ տեւեց մինչև կէս գիշեր: Տաճարը մօնելէ ետք Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս քարոզեց, վեր հանելով «լացի գիշեր»ուան ճշանակութիւնը:

\* Ուր. 23 Ապրիլ.— Ասագ Ուրբաթ (Յիշատակ Խաչելութեան): Կէսօրը քիչ անց, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատուոյն մէջ կատարուեցաւ «Խաչելութեան Կարգ»ը, նախագահութեամբ Հոգշ. Տ. Կորին Ծ. Վրդ. Մանուէլեանի:

— Կէսօրէ ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման Կարգ»ը, մեծ հանդիսատրութեամբ և ի ներկայութեան մեծ թիով ժողովուրդի, որոնք ապա երկրպագեցին Քրիստոսի դազադին իբրև ճշանակ եկեղեցիի դասին մէջ զետեղուած ապրուածքին առջև:

\* Ծր. 24 Ապրիլ.— Ասագ Ծաբաթ (Ծրագալուց Ս. Զատիկի): Առաւօտեան ժամը 8.15ին, Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ, բանալին ստնուելով Լևագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեանի ձեռքէն, ընկալեալ սովորութեան համաձայն:

— Ժամը 10.15ին, Միաբանութիւնը, Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Անժմեանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, որ լաջորդաբար կատարուեցան Ս. Գերեզմանի դրան կնքման և Լուսատրեալի հանդիսութիւնները: Ժամը 1ին Ս. Գերեզմանի քովնտի բացուածքներէն որսրս կու գար նուիրական յուր և ընդհանուր խանդավառութեան ու մոմալառութեան ընդմէջէն ընթացք կ'առնէր մեր թափօրը, գլխաւորութեամբ Լուսահան Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէանի, որ Յունաց Գերշ. Տ. Մէրմանու Ծպիսկոպոսին հետ կատարած էր Լուսատրեալի կարգը: Մեր թափօրին կը հետնէին Ղպտիներու և Աստրիներու թափօրները: Ժամը 2.30ին Միաբանութիւնը ճամբայ ելաւ դէպի Մայրաքաղաք, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտներուն: Ժամբու կէսին, Դասթի բերդին դիմաց, Գերշ. Սրբազանն ու Հոգշ. Լուսահանը զգեստաւորուեցան և թափօրը լառաջացաւ դէպի Մայրավանք, երգելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Ս. Աւետարանի ընթերցում:

— Ժամը 4ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Ծրագալուցի արարողութիւն և ապա Ասագ Սեղանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուլարեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Ս. Զատիկի նախատօնակ, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոսի, որմէ ետք Միաբանութիւնը «Այսօր յարեաւ» շարականը երգելով զգեստաւորեալ բարձրացաւ սեղանատուն:

\* Կիր. 25 Ապրիլ.— ԶԱՏԻԿ ԶԱՐՈՒԹԵԱՆ ՏԵՆԻՈՒՆ: Կէս գիշերը քիչ անց, Մայրավանքի մեծ զանգը ոտքի է հանած Միաբանութիւնն ու ժողովուրդը և

քիչ ետք լուցեալ յապտերներով և Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճէմեանի գլխաւորութեամբ, բոլորը կը մեկնին Ս. Յարութեան Տաճար: Առաւօտեան ժամերգութիւնը մինչև «Հարց» կը պաշտոնի Տաճարի մեր վերնատան մատուռին մէջ: Ապա, Միաբանութիւնը կը շարունակէ ժամերգութեան մնացեալ մասը Ս. Գերեզմանին շուրջ թափօրական գնացքով, հետևողութեամբ Ղափղներու և Ասորիներու թափօրներուն: Առաւօտեան ժամը 7ին, Գերշ. Տ. Ծափէ Արքեպիսկոպոս մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց Յարութեան խորհուրդին շուրջ «Եւ գնաց, ընդ միտս զարմացեալ թէ զի՛նչ եղև» բնաբանով: Ս. Պատարագն ու քարոզը ձայնասփռուեցան Իսրայէլեան ուստիոկայանէն: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը ևս ներկայ էր: Ժամը 9.30ին թափօրը վերադարձաւ Մայրավանք: Հ.Ե.Մ.ի սկաւառներն ու արեւոյշները իրենց փողերախումբով միասին առաջնորդեցին Միաբանութիւնը՝ որ նախորդ օրուան նման «Քրիստոս յարեալ» շարականի երգեցողութեամբ շառաքացաւ դէպի Մայրավանք և քարձրացաւ Պատրիարքարան:

— Կէսօրէ ետք, Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Զատիկական մեծ «Անդաստան»ը, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

\* Բշ. 26 Ապրիլ.— Բ. օր Ս. Զատիկի: Յիշատակ մեռելոց: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագ մատուց և քարոզեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը՝ «Համարեցաւ զիս թէ մեռալ, ալ ես կենդանի եմ» բնաբանով, խօսելով Յարութեան տոութեան մասին: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ մեծահանդէս թափօր, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր, որ ամպհովանիի տակ և Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին կ'օրհնէր Տաճարը լեցնող հոծ բազմութիւնը: Վարդապետներ ի ձեռին ունէին սրբոց մասունքներ: Հապէ՜ններու Եպիսկոպոսը, վեց վարդապետներով մասնակցեցաւ այս թափօրին: «Ծանապարհ» շարականի երգեցողութենէն և «Տէր ողորմեալ»էն ետք բոլորը «Այսօր յարեալ» շարականը երգելով քարձրացան Պատրիարքարան, ուր Ն. Ամենապատուութիւնը Ս. Պատարագի օրհնութեան նշխարներ բաժնեց բոլորին:

\* Գշ. 27 Ապրիլ.— Գ. օր Ս. Զատիկի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուռին մէջ: Ժամադարն էր Պոլսէն ուխտաւորաբար Ս. Քաղաք ժամանած Արծ. Տ. Եղիա Քհնյ. Ծուշանեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ խնդրամատուց ուխտաւորներու ննջեցեալներու հոգիներուն համար, նախագահութեամբ Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Մանուէլեանի:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

---

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայ Ափիւղը և Փոքրամասնութիւններու  
Ողբերգութիւնը

Ե.

86

Զատկական շնորհաւորական ճամբա՝  
Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Վեհափառ  
Կաթողիկոսէն

92

### ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

Տեղիք Աստուածաբանութեան

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

93

### ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Զատեաններ

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

98

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ստեփանոս Երէց Վահճաշի

Ն. ԱՐՔԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

99

### ՊԱՏՄԱԿԱՆ

Որոնազօծեր Հայոց Վանքերին կից Կարդապե-  
տարանների Պատմութիւնից

ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐԵԱՆ

101

### ԳԻՏԱԿԱՆ

Հոյամողէզներու Կեանքն ու Մահը

ՃԷՅՄԶ ՄԻՉՆԸՐ  
Թրգմ. Հ. ՆԱԳԱՇԵԱՆ

106

### Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Եկեղեցականք - Բեմականք

110

### Բովանդակութիւն

115

---

# C O N T E N T S

---

## EDITORIAL

|                                                            |    |    |
|------------------------------------------------------------|----|----|
| The Armenian Diaspora and the tragedy<br>of the minorities | Y. | 86 |
|------------------------------------------------------------|----|----|

|                                                                                  |  |    |
|----------------------------------------------------------------------------------|--|----|
| Congratulatory letter from His Holiness<br>Vazken I, Catholicos of All Armenians |  | 92 |
|----------------------------------------------------------------------------------|--|----|

## THEOLOGY

|                       |                                  |    |
|-----------------------|----------------------------------|----|
| Rudiments of Theology | <i>Archbp. Maghakia Ormanian</i> | 93 |
|-----------------------|----------------------------------|----|

## POETRY

|         |                         |    |
|---------|-------------------------|----|
| Rubayat | <i>Mourad Manoukian</i> | 98 |
|---------|-------------------------|----|

## PHILOLOGY

|                      |                            |    |
|----------------------|----------------------------|----|
| The Scribe Stepannos | <i>Archbp. N. Dzovagan</i> | 99 |
|----------------------|----------------------------|----|

## HISTORY

|                                                   |                         |     |
|---------------------------------------------------|-------------------------|-----|
| On the history of Armenian Theological<br>Schools | <i>Bp. Vahan Derian</i> | 101 |
|---------------------------------------------------|-------------------------|-----|

## SCIENCE

|                                     |                                                        |     |
|-------------------------------------|--------------------------------------------------------|-----|
| The life and death of the Dinosaurs | <i>James Michener</i><br><i>Trans. by H. Nakashian</i> | 106 |
|-------------------------------------|--------------------------------------------------------|-----|

|                                             |  |     |
|---------------------------------------------|--|-----|
| Monthly news from the Armenian Patriarchate |  | 110 |
|---------------------------------------------|--|-----|

|          |  |     |
|----------|--|-----|
| Contents |  | 116 |
|----------|--|-----|

---

Yearly subscription: 10 U. S. Dollars

All correspondence should be addressed to:

Ara Kalaydjian, The St. James Press

P. O. Box 14001, Jerusalem — Israel